10.qxd 23/05/2026 16:55 Page 1

ԳԵՂԱՄԱ ԱՇԽԱՐՀ

Քաղաքական, հասարակական, մշակութային թերթ 21 մայիսի 2026թ. թիվ 10 (638)

ԴԱՐՁԱՆՔ 30 ՏԱՐԵԿԱՆ

1996 թվականի մայիսի 10-ին լույս ընծայվեց «Գեղարքունիք» թերթի առաջին համարը:

Այսպես անկատ գլորվեց 30 տարի, ու 2026 թվականի մայիսի 11-ին տպագրվում է այդ նույն թերթի իրավահաջորդ «Գեղամա աշխարհ» թերթի 637-րդ համարը:

Թերթը հիմնադրվեց շատ դժվարին պայմաններում, Գեղարքունիքի մարզպետարանի հիմնադրմանը զուգահեռ, անցավ շատ փորձությունների միջով, չափից դուրս սուղ միջոցներով ու ստեղծագործական ուժերով, սակայն կարողացավ իր համար հարթել կայացման ու ձեռքբերումների ճանապարհ:

Այդ երեսուն տարիները մեզ համար թափած ջանքերի, բայց եւ փառքի ու հպարտության ճանապարհ են, ոգեշնչման անասելի աղբյուր:

Կարծում եմ, որ մեր թերթը հաջող է կատարել մարզի կենսագրի իր դերն ու առաքելությունը ու այսուհետ էլ կփորձի զարգացնել եւ առաջ տանել եղած ձեռքբերումները:

Շնորհակալություն թերթի հիմնադիր եւ առաջին խմբագիր եւ տնօրեն Յուրա Խաչատրյանին, որ անասելի ջանքերի ու համառության գնով հիմնադրեց ու առաջ տարավ թերթի աշխատանքները:

Շնորհակալություն երկրորդ խմբագիր-տնօրեն Նաիրի Օհանյանին, որ շարունակեց խմբագրության ընդհատված աշխատանքը հիմնադիր խմբագրի մահվանից հետո:

Շնորհակալություն Գեղարքունիքի բոլոր մարզպետներին, ովքեր մշտապես սատար կանգնեցին թերթի գործունեությանը, շնորհակալություն Գեղարքունիքի մարզի համայնքների ղեկավարներին, դպրոցների, առողջապահական հիմնարկների, այլ հաստատությունների տնօրեններին, ովքեր բաժանորդագրությամբ ու աջակցությամբ մշտապես ծածկել են թերթի ծախսերի կարիքները:

Շնորհակալություն «ԳեոՊրոմայնինգ Գոլդ» ընկերությանը՝ վերջին վեց տարիների ընթացքում մեր թերթին ամեն ամիս հատկացվող ֆինանսական աջակցության համար:

Շնորհակալություն մեր բոլոր ընթերցողներին, ովքեր մշտապես քաջալերել ու ոգեւորել են մեզ:

Շնորհակալություն «Գեղամա աշխարհ» թերթի բոլոր աշխատակիցներին, որոնց ջանքերով թերթը հրատարակվում է արդեն 637 անգամ:

Հուսամ, որ «Գեղամա աշխարհը» դեռ նույնքան ու ավել անգամներ լույս կընծայվի՝ շարունակելով իր հայապահպան ու հայրենապահպան առաքելությունը:

Անսահման երջանկությամբ ու հպարտությամբ շնորհավորում եմ բոլորիս «Գեղամա աշխարհ» թերթի գործունեության 30-րդ տարեդարձի կապակցությամբ, քանի որ այն մեր երկրի հոգեւոր ու մնայուն արժեքներից մեկն է դարձել վաղուց:

Ձեռքս գնա, դառնա ի հող, գիրս մնա հիշատակող:

Խոսրով Խլղաթյան

ԸՆԹԱՆՈՒՄ Է ՀՀ ԱԺ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԸ

ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2026 թվականի մայիսի 3-ի արտահերթ նիստում իրականացրել է 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ԱԺ ընտրությունների մասնակից կուսակցությունների/դաշինքների ընտրական ցուցակների գրանցումը:

ԿԸՀ-ն ներկայացրել է ընտրություններին մասնակցող կուսակցությունների/ դաշինքների հերթականությունը՝ ըստ իրենց լիազոր ներկայացուցիչների կատարած վիճակահանության:

Այսպիսով, 2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք ՀՀ ԱԺ ընտրություններին մասնակցելու համար ԿԸՀ-ն գրանցել է 19 քաղաքական ուժի, որոնց օգտին պետք է քվեարկեն ընտրելու իրավունք ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները: Գրանցված քաղաքական ուժերի ցուցակը, ըստ հերթականության, որը կազմվել է վիճակահանությամբ, ունի հետեւյալ պատկերը:

1. ՌԵՖՈՐՄԻՍՏՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
2. «ԲՈԼՈՐԻՆ ԴԵՄ ԵՄ» ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
3. «ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԱՇԻՆՔ (կազմում՝ «ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ «ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ, «ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀԱՅԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇՆՈՐՀԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
5. «ՆՈՐ ՈՒԺ» ՌԵՖՈՐՄԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
6. «ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԹԵՎԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
7. «ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
8. «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԲԵՎԵՌ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
9. ՔՈՉԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ ԵՎ ԱԶԳԻ ԶԱՐԹՈՆՔ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
10. ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ-10
11. «ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
12. ՔՐԻՍՏՈՆԵԱ-ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
13. «ԱԼՅԱՆՍ» ԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ՑԵՆՏՐԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
14.«ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
15. ԴԵՄՈԿՐԱՏԻԱ ՕՐԵՆՔ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
16. «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
17.ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ կազմում՝ «ՀԱՅ ՅԵՂԱՓԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ, «ԱՌԱՋ» ԱՋԱԿԵՆՏՐՈՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
18. «ՀԱՆՈՒՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
19. «ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածն է մայիսի 8-ից հունիսի 5-ը ժամը 24:00-ն:

Քաղաքական ուժերն այս օրերին լրատվամիջոցներով, սոցիալական ցանցերով, պաշտոնական կայքէջերով, անձնական հանդիպումներով, հանրահավաքներով, այլ միջոցներով իրականացնում են նախընտրական քարոզչություն:

«Գեղամա աշխարհ»

ՆՈՐԱՏՈՒՍԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ

Նորատուսի պատմամշակութային հուշարձանների շարքում իր ուրույն ու բացառիկ տեղն ունի նաեւ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: Ըստ Սիմեոն Երեւանցի կաթողիկոսի՝ եկեղեցին կոչվել է Դափուց վանք եւ եղել է կուսանոց: Ըստ արձանագրությունների եւ շինարարական ձեւերի՝ կարելի է այն վերագրել 9-10-րդ դարի կառույցների շարքին:

Հոգեւոր այս կառույցի մասին հիշատակել են Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը, Երվանդ Լալայանը, Սեդրակ Բարխուդարյանը, իսկ նրանց ուսումնասիրությունները լրացրել ու ամբողջացրել է Սուրեն Սաղումյանը:

Այն առավելապես աչքի է ընկնում իր փոքր չափերով, բայց համաչափ, կոկիկ, գեղեցիկ ու երեւելի տեսքով, որն ավելի շատ չափված-ձեւված մանրակերտի է նմանվում:

Դափուց վանքն ունի պարսպապատակ բակ, որտեղ պահպանվել են նաեւ 13-17 դարերի խաչքարեր: Ըստ ուսումնասիրողների՝ վանքը նախկինում եղել է միանավ թաղածածկ բազիլիկ կառույց, որը 10-11 դդ դարերին Խաչատուր ճարտարապետը վերափոխել է գմբեթավոր սրահի: Հյուսիսային եւ հարավային կողմերում ավելացվել են երկու խորաններ, ներքուստ, պատերին կից ավելացվել են որմնամույթեր, եւ տեղադրվել է սրածայր գմբեթ:

Կառույցի պատմության ու ժամակագրության մասին ուսումասիրողները հետեւություններ են արել հատկապես պատերի ներսում պահպանված վիմագիր արձանագրություններից, որոնց մի մասն ընդամենը կիսատ կամ կցկտուր տեղեկություններ են փոխանցել հետագա սերունդներին:

/շարունակությունը՝ էջ 3-ում/

10.qxd 23/05/2026 16:55 Page 2

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՃԱՊՈՆԻԱՅԻ ԴԵՍՊԱՆՆ ՈՒ ՄԱԶԾ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ՃԱՄԲԱՐԱԿՈՒՄ ԾԱՆՈԹԱՑԵԼ ԵՆ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԱՄԲԱՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ

Հայաստանում Ճապոնիայի դեսպանի եւ ՄԱԶԾ ներկայացուցչի այցի առաջին կանգառը եղել է Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքում, որտեղ նախորդ տարի ՄԱԶԾ «Աջակցություն Լեռնային Ղարաբաղից տեղահանվածներին եւ Հայաստանի հյուրընկալող համայնքներին հիմնական ենթակառուցվածքների վերականգնման եւ սոցիալական ինտեգրման միջոցով» ծրագրի շրջանակում կառուցվել է 11 հազար խորանարդ մետր օգտակար ծավալով օրվա կարգավորվող ջրամբար (ՕԿՋ): Այցին մասնակցել են նաեւ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Ջանիկ Բազեյանը, ՏԿԵՆ Ջրային կոմիտեի նախագահի տեղակալ Նվարդ Վարդանյանը, ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության խորհրդական Աշոտ Գիլոյանը, Ճամբարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ռոբերտ Օհանյանը:

Ակնկալվում է, որ ջրամբարը զգալիորեն կբարելավի ոռոգման ջրի հասանելիությունը՝ հնարավորություն տալով վերականգնել ոռոգումը մինչեւ 200 հեկտար չոռոգվող վարելահողերում եւ ապահովել մինչեւ 200 տնտեսությունների շահառություն: ՄԱԶԾ-ի կողմից ջրամբարի կառուցումից հետո, Ճամբարակ համայնքը ներդրում է կատարել ՕԿՋ-ին կից 4,424 մետր երկարությամբ ոռոգման ջրի բաշխման համակարգի կառուցման մեջ:

Հյուրերը ծանոթացել են նաեւ փախստականներ ընդունող համայնքներում էներգետիկ դիմակայունության բարձրացման նպատակով, հիմնական հանրային հաստատություններում, տեղադրված հիբրիդ արեւային համակարգերին: 5 կՎտ հզորությամբ համակարգերը ստացիոնար են, իսկ 2 կՎտ հզորությամբ համակարգերը՝ շարժական եւ հեշտ տեղակայվող: Նախատեսված լինելով ինչպես ցանցին միացված, այնպես էլ ինքնավար աշխատանքային ռեժիմների համար՝ այս համակարգերն ապահովում են կենսական ծառայությունների անխափան մատուցում էլեկտրաէներգիայի անջատումների ընթացքում:

Գեղարքունիքի մարզում ընդհանուր առմամբ տեղադրվել է ինը համակարգ (չորս՝ 2 կՎտ եւ հինգ՝ 5 կՎտ), որոնցից ութը սպասարկում են Ճամբարակ համայնքը՝ համայնքապետարանի շենքը (5կՎտ), ?3 մանկապարտեզը (5 կՎտ), բժշկական կենտրոնը (5 կՎտ), տեղական փրկարար ծառայության ջոկատը (5կՎտ եւ 2կՎտ), ինչպես նաեւ Ճամբարակի ամառային արոտավայրերը (3 միավոր 2կՎտ):

Այնուհետ Հայաստանում Ճապոնիայի դեսպան Յուտակա Աոկին եւ Հայաստանում ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ Նաթիա Նացվլիշվիլին մեկնել են Կոտայքի մարզ՝ այնտեղ իրենց կողմից ներդրված ծրագրերին ծանոթանալու նպատակով:

«Գեղամա աշխարհ»

ԳԵՂՀՈՎԻՏՈՒՄ 2018-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 33 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ



Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղհովիտ գյուղում սուբվենցիոն եւ պետական տարբեր ծրագրերով 2018-2025 թվականներին սոցիալ-տնտեսական եւ կենսական նշանակության 33 ծրագիր է իրականացվել, որոնց ուղղությամբ կատարված կապիտալ ներդրումների ընդհանուր գումարը կազմում է 5 միլիարդ 108 միլիոն 592 հազար դրամ: Ներդրված 29 սուբվենցիոն ծրագրերի ընդհանուր արժեքը կազմում է 1 միլիարդ 402 միլիոն 592 հազար դրամ, պետական 4 ծրագրերի ընդհանուր արժեքը՝ 3 միլիարդ 706 միլիոն 388 հազար դրամ: Կատարված ներդրումների եւ իրականացված ծրագրերի արդյունքում 2018-2025 թվականների ընթացքում Գեղհովիտում կառուցվել է 50 կիլոմետր խմելու, 14 կիլոմետր 856 մետր ոռոգման ջրատարներ, 29 կիլոմետր 910 մետր արտաքին լուսավորության ցանց, հիմնանորոգվել ներհամայնքային ու միջպետական նշանակության 19 կիլոմետր 100 մետր ճանապարհ, շուրջ 6 հազար քառակուսի մետր մայթեր:

Պետական ծրագրերով կառուցման ընթացքի մեջ են գտնվում Գեղհովիտի թիվ 2 միջնակարգ եւ Լեռնակերտի հիմնական դպրոցների շինարարական աշխատանքները, որոնց մեկնարկը տրվել է 2021-2022 թվականների ընթացքում: Գեղհովիտի թիվ 2 միջնակարգ դպրոցի շինարարությունը նախատեսվում է ավարտել 2026 թվականի նոյեմբերին, Լեռնակերտի հիմանական դպրոցի շինարարությունը՝ 2026 թվականի հուլիս ամսին:

Գեղհովիտի թիվ 2 միջնակարգ դպրոցի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 1 միլիարդ 276 միլիոն 690 հազար դրամ, Լեռնակերտի հիմնական դպրոցի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը՝ 739 միլիոն 698 հազար դրամ:

Պետբյուջեի միջոցների հաշվին հիմնանորոգվել է Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ճանապարհի 14 կիլոմետրանոց հատվածը 2022-2024 թվականների ընթացքում, որից 8 կիլոմետրն անցնում է Գեղհովիտ գյուղի միջով ու Լեռնակերտ բնակավայր տանող հատվածով: Կատարված ներդրումը կազմում է շուրջ 1,2 միլիարդ դրամ:

Պետական մեկ այլ ծրագրով էլ, 490 միլիոն դրամ արժեքով, արդիականացվել է Գեղհովիտի խմելու ջրի մատակարարման համակարգը:

«Գեղամա աշխարհ»

ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔՈՒՄ 2018-2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ ԿԵՆՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 38 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

2018-2025 թվականներին Գեղարքունիքի մարզկենտրոն Գավառ քաղաքում ՀՀ կառավարության կողմից իրականացվող սուբվենցիոն ու պետական այլ ծրագրերով իրականացվել է սոցիալ-տնտեսական ու կենսական նշանակության 38 ծրագիր, որոնց արդյունքում կատարված կապիտալ ներդրումները կազմել են 9 միլիարդ 429 միլիոն 969 հազար դրամ:

Ինչպես տեղեկացրին Գավառի համայնքապետարանի աշխատակազմից, իրականացված ծրագրերից 28-ը սուբվենցիոն են, որոնց ուղղությամբ կատարված ներդրումները կազմում են 3 միլիարդ 205 միլիոն դրամ: Պետական ծրագրերով իրականացված աշխատանքների ընդհանուր արժեքը կազմում է 5 միլիարդ 331 միլիոն 134 հազար դրամ:

Իրականացված աշխատանքների արդյունքում 2018-2025 թվականների ընթացքում Գավառ քաղաքում կառուցվել է 25 հազար 740 մետր արտաքին լուսավորության ցանց, 18 հազար 937 գծամետր ճանապարհ, 21 հազար 835 մետր ասֆալտապատ ու սալիկապատ մայթեր, 7053 մետր արտաքին, 4616 մետր ներքին ջրահեռացման համակարգեր, 292,5 խորանարդ մետր ծավալով գաբիոնային հենապատ, կենտրոնական հարապարկի շատրվանային համակարգ, պուրակներ եւ խաղահրապարակներ, հացառատ թաղամասի կոյուղագիծը, հիմնանորոգվել են Գավառի համայնքապետարանի, թիվ 7, 8 մանկապարտեզների, մշակույթի տան, գեղարվեստի դպրոցի շենքերը, բազմաբնակարան 4 շենքերի տանիքներ, տեղադրվել Գավառի պատմամշակութային արժեքների գովադային վահանակներ կրող 8 ավտոկանգառ:

Պետական ծրագրերի շրջանակներում հիմքից կառուցվել ու 2021 թվականից շահագործման է հանձնվել Գավառի Պ. Ղանդիլյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցի շենքը, որը վերազինված է արդի չափորոշիչներին համապատասխան բոլոր պայմաններով:

Գավառ-Գեղարքունիք ավտոճանապարհի շինարարության պետական ծրագրով հիմնանորոգվել է Գավառ քաղաքով անցնող 2,6 կիլոմետրանոց ճանապարհահատվածը:

2023 թվականի դեկտեմբերից պետական ծրագրով սկսվել եւ ընթանում են Գավառի գյուղատնտեսական քոլեջի նոր շենքի կառուցման աշխատանքները՝ 1 միլիարդ 307 միլիոն 531 հազար դրամ արժեքով: Շինարարությունը նախատեսվում է ավարտի հասցնել 2026 թվականի դեկտեմբերին:

ՀՀ կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում 2025 թվականից սկսվել եւ ընթանում են Գավառի թիվ 5 հիմնական դպրոցի կառուցման աշխատանքները՝ 2 միլիարդ 319 միլիոն 855 դրամ արժեքով, եւ Գավառի թիվ 4 հիմնական դպրոցի վերանորոգման աշխատանքները՝ 271 միլիոն 980 հազար դրամ արժեքով: Գավառի թիվ 4 հիմնական դպրոցի շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2026, թիվ 5 հիմնական դպրոցի շինարարական աշխատանքները՝ 2027 թվականի ընթացքում:



«Գեղամա աշխարհ»

ՄԱԴԻՆԱ ԳՅՈՒՂՈՒՄ 2018-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 16 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ,

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մադինա գյուղում 2018-2025 թվականներին սուբվենցիոն ու պետական այլ ծրագրերով սոցիալ-տնտեսական եւ կենսական նշանակության 16 ծրագիր է իրականացվել, որոնց ուղղությամբ կատարված կապիտալ ներդրումների չափը կազմել է 2 միլիարդ 654 միլիոն 195 հազար դրամ:

Ներդրված ծրագրերից 15-ը սուբվենցիոն են՝ 659 միլիոն 274 հազար 773 դրամ ընդհանուր արժեքով, եւ 1-ը՝ պետական՝ 1 միլիարդ 994 միլիոն 921 հազար դրամ արժեքով: Ներդրված ծրագրերի իրականացման արդյունքում Մադինայում 2018-2025 թվականների ընթացքում կառուցվել է 2676 մետր խմելու, 9907 մետր ոռոգման ջրատարներ, 7200 մետր արտաքին լուսավորության ցանց եւ կրթահամալիրի շենք, հիմնանորոգվել 2539 գծամետր երկարության ներհամայնքային նշանակության ճանապարհ:

Մադինայի կրթահամալիրը կառուցվում է ՀՀ կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում, 1 միլիարդ 994 միլիոն 921 հազար դրամ պայմանագրային արժեքով:

Կրթահամալիրի կառուցման աշխատանքները մեկնարկել են 2024 թվականի դեկտեմբերին եւ կավարտվեն 2026 թվականի հոկտեմբերին:

«Գեղամա աշխարհ»

10.qxd 23/05/2026 16:55 Page 3

ՆՈՐԱՏՈՒՍԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ

/սկիզբը՝ էջ 1-ում/

Անվանի հնագետ Սուրեն Սաղումյանի կարծիքով՝ շուրջ 7-րդ դարի ընթացքում կառուցված ու հետագա դարերի ընթացքում ավերված Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին առաջին անգամ նորոգվել է Իվանե Զաքարյան իշխանի տիրապետության ընթացքում: Դա վերաբերում է հին, միանավ սրահին:

«Ըստ այդմ, ոմն Տրուպ վարդապետ, «հալալ ընչից եւ ի ստացվածոց յուր շինում է զավերեալ եկեղեցիս վանուցս Նորատվաց»: Հավանաբար, Նորատուսի հոգեւոր շինությունները վնասվել էին երկրաշարժից ու նորոգվել անվանի հոգեւոր առաջնորդի կողմից, որին կամակից ու օգնական է եղել Մխիթար դեմեթարը: Այս միջամտությունը տեղի է ունեցել 1213-1227 թվականների միջակայքում, ավելին չի պարզվում: Իսկ ահա եկեղեցու ներսի 1344 թվականի վիմագիրը տեղեկացնում է, որ ի պարոնության իշխանին Հայոց Բուրթելին, Աստծո մեղուցեալ ծառա Ավագը զորավիգ է եղել վանքի շինությանը: Ամենայն հավանականությամբ, Նորատուսի Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին սասանվել է 1319-1320 թվականների երկրաշարժից, որը հսկայական ավերածություններ է գործել Գեղարքունյաց գավառում, այն աստիճան, որ Դափուց վանքը վերաշինվել է նորովի՝ միանավ սրահը վերափոխելով կենտրոնագմբեթ հորինվածքի: Դա հմտորեն է իրագործել Խաչատուր քարագործը՝ ճարտագիտագական ու ճարտարապետական խորությամբ: Փոքրածավալ սրահի ներքին պատերին արեւմուտքից հպվել են որմնամույթեր, բեմի կամարին՝ մի երկրորդ կամարահենարան, որոնց կցվածքներում գոյացած առագաստները համակցող հենարանների վրա բարձրացել է վերասլաց թմբուկը: Անսովոր այս կազմվածքի ստեղծման հարկադրանքով վերձիգ գմբեթը հյուսիսից ու հարավից նստել է անմիջապես կողապատերին՝ կազմելով նրանց ուղիղ շարունակությունը՝ առանց լանջերի ու տամբաների: Իսկ արեւելյան անկյուններում, արագիլի բացազատ թեւերի պես, հպվել են միաթեք ծածկով ցածրադիր խորաններ»,-եզրակացնում է Սուրեն Սաղումյանը:

Դափուց վանքի մուտքի կամարի վերեւում պահպանված արձանագրությունը, որն արդեն կատարվել է 20-րդ դարի սկզբում, ազդարարում է, որ կառույցը վերանորոգվել է նաեւ 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին, նորբայազետցի Գրիգոր Ավոյանի ջանքներով: Այդ ընթացքում աշխատանքներին օժանդակել են նաեւ Գրիգորն Ավետիսովը եւ 90 տարեկան Սեդրակ Նորատունքցին: Վանքի ամբողջական ու վերջին նորոգումը կատարվել է 1984 թվականին, Հայաստանի Հուշարձանների պահպանության վարչության ուժերով:

Վերջին նորոգությունների ընթացքում կառույցը ծավալապաշտական փոփոխություն չի կրել:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչը կամ Դափուց վանքը եղել է ճգնակյացների մենաստան-անապատ՝ շրջափակված պարսպով ու կացարաններով: Ինչպես նշել է Հովհաննես Շահխաթունյանցը՝ Դափուց վանքը եղել է բնակավայրից դուրս, գյուղի հարավային կողմում, անդաստանի մեջ ու ծառայել է որպես կույսերի մենաստան: Նման տեղեկություն հաղորդել է նաեւ Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը:

Վիմագիր արձանագրությունները փաստում են, որ Դափուց վանքն իր ակտիվ գործունեությունը ծավալել է 10-16-րդ դարերի ընթացքում: Այն գործել է մինչեւ 1920-ական թվականները:

Այժմ ներկայացնենք Դափուց վանքի ներսի պատերին պահպանված վիմագրությունները, որոնք վերծանվել են Սեդրակ Բարխուդարյանի կողմից:

Եկեղեցու արեւմտյան պատի հարավային մասում անկանոն տողերով եւ գրչությամբ գրված է 4 տող.

«ՇՆՈՐՀԻՎ ԱՍՏՕՆ ԿԱՄ ԵՂԵՎ ԻՆՁ ՀԵՐԱԿՂԻ ՀԱՎՆՈՒՆՈ ԵՎ ԵՏՈՒ ԶՁՈՐՈՂԱՆՍ :Բ: ԱՐՏ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՀՐԱՄԱՆԱՎ ԳԱԳԿԱ ՇԱՀՆՇԱՀԻ ԵՎ ԳՆԵՑԻ ԶՐ...»: Ըստ ուսումնասիրողների՝ արձանագրությունը մնացել է կիսատ կամ անավարտ:

Ըստ Սեդրակ Բարխուդարյանի՝ այս արձանագրությունը համարվում է 10-րդ դարի գործ, քանի որ, բացի այստեղ հիշատակված Գագիկ Շահնշահի անունից, Գավառ քաղաքում պահպանված է 1000 թվականով թվագրված մի արձանագրություն, որտեղ դարձյալ հիշատակված է նույն Հերակլի անունը:



Եկեղեցու բեմի կորության հարավային մասում ագուցված խաչքարի վրա պատկերված խաչի շուրջ գրված է. «ԽԱՉԱՏՈՒՐ ՔԱՐԱԳՈՐԾ. ՅԻՇԱ»: Ըստ Բարխուդարյանի՝ խաչքարի տեղադրման, խաչի եւ գրերի հնաձեւության, եւ շենքի բազիլիկ ձեւից գմբեթավորի վերակառուցելու ժամանակի հիման վրա այն համարվում է 10-րդ դարի վերջի կամ 11-րդ դարի սկզբի գործ ու վերակառուցման ճարտարապետի հիշատակագրություն:

Եկեղեցու հարավային պատի վերին մասում, քիվի տակ, արտաքուստ 4 տող է արձանագրված. «Ի ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆՆ ՎՐԱՑ ԹԱՄԱՐԻ: ԵՎ ԻՆՔՆԱԿԱԼ ՏԷՐՈՒԹԵԱՆ ԻՎԱՆԷԻ ԵՎ ՇԱՀՆՇԱՀԻ, Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆՆ ՏԵՐ ՎՐԹԱՆԻՍԻ ԱԹՈՌԱԿԱԼ ՄԵԾ ԳԵՂԻՍ ԵՍ ՏՐՈՒՊ ՎԱՐԴԱՊԵՏ ՇԻՆԵՑԻ ԶԱՎԵՐԵԱԼ ԵԿԵՂԵՑԻՍ ՎԱՆԱՑՍ ՆՈՐԱՏՎԱՑ Ի ՀԱԼԱԼ ԸՆՉԻՑ ԵՎ Ի ՍՏԱՑՎԱԾՈՑ ԻՄՈՑ ՍԱԿԱՎ ԵՎ ՀԱՍՏԱՏԵՑԻ ՀՈԳՈՅ ԻՄՈՅ ԱՆՁԻՆՁ...ԵՎ ԿԱՐԳԵՑԻ ԻՆՁ ԵՂԲԱՐԲԱՍ ՀԱՆԴԵՐՁ Ի ՏԱՐԻՆ :Է: ՊԱՏԱՐԱԳ ՁՅԱՐՈՒԹԵԱՆ ՇԱԲԱԹՆ : ՈՐ ԱՌՆԵՆ ՕՐՀՆԻՆ ՅԱՍՏՈՒԱԾ ԽԱՓԱՆՈՂՔՆ ...ԱՄԱՆ ՍԻՆ ԱՌՆՈՒ... ԿԱՏԱՐԻՉՔ ՀՐԱՄԱՆԱՑ ՄԵՐՈՑ ՕՐՀՆԵՑԻՆ Ի ՏԵՐ ԱՍՏՈՒԾՈՅ. ԱՄԵՆ»:

Բարխուդարյանի կարծիքով՝ այն պետք է գրված լինի 13-րդ դարի սկզբներին, երբ դեռ կենդանի էր Իվանե Զաքարյանը, իսկ Շահնշահը՝ հասուն գործիչ:

Եկեղեցու արեւմտյան պատի հյուսիսային մասում՝, ներքուստ, մուտքի անկյունից, 6 տող. «ԵՍ ՄԽԻԹԱՐ, ՆՈՐԱՏՎԱՑ ԴԵՄԵԹԱՐՍ ՈՐ ԿԱՄԱԿԻՑ ԵՎ ՕԳՆԱԿԱՆ ԵՂԷ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԵՎ ՇԻՆՈՒԹԵԱՆՆ ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՎՈՐՉԻՍ ԵՎ ՆԱ ՍԱՀՄԱՆԵՑ ԻՆՁ Ի ՏԱՐԻՆ :Բ: ԺԱՄ ՁՍՈՒՐԲ ԽԱՉԻՆ ՏՈՆՆ ԿԱՏԱՐԻՉՔ ՀՐԱՄԱՆԱՑ ՄԵՐՈՑ ՕՐՀՆԻՆ ՅԱՍՏՈՒԾՈՅ»:

Ըստ Բարխուդարյանի՝ արձանագրությունը ժամանակակից է նախորդին եւ գրվել է 1220-ական թվականներին:

Եկեղեցու հյուսիսային պատի արեւմտյան մասի վերեւում, քիվի տակ արտաքուստ արձանագրված է 7 տող. «ԵՍ ԽՈՅՏԱՆ ԴԵՄԵԹԱՐՍ ՆՈՐԱՏՎԱՑ ՕԳՆԱԿԱՆ ԵՂԷ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻՍ ԸՆՁՈՔ ԻՄՈՔ ԵՎ ՎԱՐԴԱՊԵՏՍ ՍԱՀՄԱՆԵՑ ԻՆՁ Ի ՏԱՐԻՆ:Բ: ՕՐ Ի ԳՅՈՒՏ ԽԱՉԻՆ.ՄԻՆՆ ԻՆՁ ԵՎ ՄԻՆՆ ԿԵՆԱԿՑԻՆ ԻՄ ՔՐԻՍՏՈՆԷԻՆ. ԿԱՏԱՐԻՉՔ ՀՐԱՄԱՆԱՑ ՄԵՐՈՑ ՕՐՀՆԻՆ ՅԱՍՏՈՒԾՈՅ»:

Ըստ Բարխուդարյանի՝ արձանագրության հստակ ժամանակը որոշվում է Խոյդանի մեկ այլ արձանագրությամբ, որը գտնվում է Նորատուսի գերեզմանատանը, խաչքարի վրա՝ թվագրված 1221 թվականով:

Եկեղեցու արեւմտյան պատի վերին մասում, քիվի տակ, արտաքուստ, սպիտակավուն երեսպատման քարի վրա, երկու խաչ եւ շուրջը արձանագրված. «ԱԱՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ ԿԱՐԱՊԵՏԻՆ...ԹՎ. :ՈԿԶ: /1217/ ԿԱՆԿՆԵՑԱՎ ՍՈՒՐԲ ԽԱՉՍ»:

Եկեղեցու հարավային պատի կենտրոնում, ներքուստ 8 տող. «ԹՎ :ՉՂԳ: /1344/ ՇՆՈՐՀՈՒԹՅՈՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՎ ՊԱՐՈՆՈՒԹԵԱՆՆ ԻՇԽԱՆԻՆ ՀԱՅՈՑ ԲՈՒՐԹԵԼԻՆ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԶԱՎԱԿԱՑ ՅՈՒՐ ԲԷՇՔԵՆԱՅ ԵՎ ԻՆԱՆԻԿԻՆ, ԵՍ ՄԵՂՈՒՑԵԱԼ ՕԱՌԱՅ ԱՍՏՈՒԾՈՅ ԱՎԱԳՍ, ՎԱՍՆ ԵՐԿԱՐ ԿԵՆԴԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՐՈՆԱՑ ՄԵՐՈՑ ԿԱՄԱԿԻՑ ԵՂԷ ՇԻՆՈՒԹԵԱՆ ԼԱԼ ԸՆՉԻՎՔ ԳՆԱԾ Ի ՆՈՐԱՏՎԱՑ ՁՐԱ ՎԵՐԱ :Ա: ԱԿՆ ՁԱՂԱՑԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐՍ : ՄԻԱԲԱՆՔՍ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ Ի ՏԱՐԻՆ :Գ: ՊԱՏԱՐԱԳ ԻՆՁ, ԱՎԱԳ :Ե: ՇԱԲԱԹ ՕՐ. ԿԱՏԱՐԻՉՔ ՕՐՀՆԻՆ ՅԱՍՏՈՒԾՈՅ»:

Եկեղեցու հարավային պատի կենտրոնում, նախորդի անմիջական տակը պահպանվել է չավարտված արձանագրության 1 տող. «ՅԱՆՈՒՆ ԱՐԱՐՉԻՆ ԱՍՏԾՈՅ ԵՎ ՅԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՄԵՐ...»:

Եկեղեցու հարավային մույթի վրա, ներքուստ արձանագրված է 6 տող.

« ԱԳԱՐԱԿԻՍ Մ... ՈՐ ՄԻԱԲԱՆԵՑԱ ՎԱՐԴԱՊԵՏԻՍ ԻՄ ԸՆՁԱԻՔ ԻՄԱՒ ՍԱՀՄԱՆԵԱՑԻՆ ԻՆՁ :Ա: ԺԱՄ Ի ՏԻՐՈՋՆ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ԵՐԱԳԼՈՒՑԻՆ ԱՆԽԱՓԱՆ»:

Եկեղեցու հյուսիսային մույթի վրա, ներքուստ, մանր խաչերի գլխին արձանագրված է. «ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ ՍՈՒՐԲ ԽԱՉԻՍ ՏԻՐՈՋ ՀՈԳՈՒՆ ԱՄԵՆ»:

Եկեղեցու հարավային պատի վերին մասում ներքուստ ագուցված խաչքարի տակ արձանագրված է. «ՀԱԶԱՐՄԱՆ ԿԱՆԿՆԵՑԻ»:

Եկեղեցու հարավային պատի վերին մասում, արտաքուստ, մեծ արձանագրության տակ պահպանված է երկտողանի արձանագրություն. «ԵՍ ՍԱՐԳԻՍ ՈՐԴԻ ԴԻԼԻՖԱՆԻՆ ԵԿԻ ԴՈՒՌՆ ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՎՈՐՉԻՍ, ՏԱՐԻՆ :Գ: ՊԱՏԱՐԱԳ ԿԱՏԱՐՈՂՔ ՕՐՀՆԻՆ Ի ՔՐԻՍՏՈՍ ԱՍՏՈՅՈՅ»:

Ըստ Բարխուդարյանի՝ այս Սարգսի տապանաքարը գտնվում է Գավառ քաղաքի գերեզմանատանը: Նա մահացել է 1502 թվականին:

Ինչպես տեսնում ենք, Նորատուսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչը, նույնիսկ փոքր չափերի մեջ, անչափ հարուստ է վիմագիր արձանագրություններով, ու քարեղեն այդ գրերը մնացել են անջինջ տեւական դարերի ընթացքում՝ մեզ փոխանցելով անցյալի պատմությունը, լեզուն ու մշակույթը, իշխանների ու հոգեւորականների, քարագործների ու ճարտարապետների անունները: Այն նման է նաեւ անխորտակ գրադարանի՝ գրված ամենատարբեր, ձեւավոր ու պատկերավոր ձեռագրերով:

Վիմագիր արձանագրություններ են պահպանված նաեւ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակի գերեզմանոցում տեղադրված խաչքարերին: Արձանագրությունները վերծանել է Սուրեն Սաղումյանը՝ տալով նաեւ Աստվածաշնչյան մոտիվներով արված գեղեցիկ պատկերաքանդակների մեկնաբանությունները:

Ինչպես նշում է Սուրեն Սաղումյանը «Նորատուս» գրքում, Բարխուդարյանի «Դիվան հայ վիմագրության» աշխատության մեջ Նորատուսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու վիմագրություններից վերծանված ու հրատարակված 13 արձանագրություններին ինքն ավելացրել է եւս 23-ը, որոնք առկա են ինչպես եկեղեցու արտաքին կամ ներքին պատերին, այնպես էլ՝ բակի խաչքար-տապանաքարերին:

Եկեղեցու արեւմտյան պատին, ներքուստ, մուտքից ձախ, գեղագիր 1 տող է պահպանվել՝ 10-րդ դարի գիր համարվող՝ «ՅՈՒՍԻԿ»:

Եկեղեցու արեւմտյան պատին, դրսից, հյուսիսային եզրի ստորին շարքի պարզ գծախաչերի արանքում պահպանվել է 1 տողանի արձանագրություն. «ՍՈՒՐԲ ԽԱՉՍ...»:

Եկեղեցու արեւմտյան պատին, որպես նախորդի շարունակություն, արձանագրված է 2 տող. «ՍՈՒՐԲ ԽԱՉՍ ԲԱՐԷԽՈՍ ՎԱՉԷԻՆ»: Գրվել է 15-16-րդ դարերի ընթացքում:

Եկեղեցու արեւմտյան պատի աջ թեւում, դրսից, պահպանված է 1 տողանի արձանագրություն. «ՍՈՒՐԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽՈՍ ՄՀԴՍԻ ԱՀԱՐՈՆԻՆ, ԱՂԱՅՊԷԿԻՆ»:

Եկեղեցու մուտքի կամարից վերեւ, երեք քարերի վրա, դրսի կողմից արձանագրված է 13 տող: Այն վերաբերում է 1909 թվականի ընթացքում կատարված նորոգումներին:

Եկեղեցու բակի մահարձան-խաչքարերին արձանագրված են Հարուկինի, Եղմարի, Իգնատիոսի, Բարաթի, Մուսէսի, Վարդան Աբեղայի, Ջհանխանի, Ոյհանիսի, Միխիսթոս Կիրակոսի, Միրզի, Տեր Գրիգորի, Գրիգոր քահանայի անունները: Խաչքարերը հիմնականում կերտված են 16-րդ դարում:

Վարդան Աբեղայի խաչքարը մշակված է հմտորեն: Խորանի գլխին Խաչեցյալն է՝ ինքնատիպ կազմվածքով: Տիրոջ գլխին իջել է աղավնակերպ Սուրբ Հոգին, կողերին արեւն ու լուսինն են, թեւատակերին՝ ծնկաչոք Մարիամն ու Հովհաննեսը: Թեւերին նստած են բադակտուց թռչուններ, իսկ խաչահանգույցի ռոմբայում Ադամի գլուխն է: Այս գեղաքանդակ խաչքարի կազմողի անունը նույնպես Վարդան է:

Մեկ այլ Վարդան Աբեղայի խաչքարի քիվի տակ պատկերված է Քրիստոսը՝ բեղ-մորուքով, գահին բազմած, ավետարանիչներով ու հրեշտակներով շրջափակ, եզրակողերին, հասակով մեկ, շերտավոր երկար զգեստով Հովհաննեսն ու Մարիամը:

Միխիսթոս Կիրակոսի խաչքարի քիվի տակ հասակով մեկ, առանց ծալքերի երկար զգեստով, երկար գոգնոցով, աջը վեր պարզած, ձախով Սուրբ Գիրքը կրծքին սեղմած Քրիստոսն է՝ ավետարանիչների խորհրդանշանների հարակցությամբ:

Գրիգոր քահանային պատկանող խաչքարի գագաթը երկթեք-սրանկյունի է, խորանի գլխին պիղատոսյան խաչին գամված Տիրոջ նահատակությունն է: Հիսուսը ծոպավոր թասակով է, բեղ-մորուքով, երկար, մինչեւ սրունքները հասնող շերտավոր գոգնոցով:

Նորատուսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին կամ նույն Դափուց վանքը համարվում է հայ ժողովրդի սրբայրերից ու ուխտավայրերից մեկը, ուր այցելում են ոչ միայն Նորատուսի կամ հարակից բնակավայրերի, այլ նաեւ Հայաստանի մայրաքաղաքի ու այլ մարզերի բնակիչները, աշխարհի տարբեր երկրներում ապրող հայ մարդիկ: Այցելուների մեջ մեծ թիվ են կազմում նաեւ օտարերկրյա զբոսաշրջիկները:

Նորատուսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին կամ նույն Դափուց վանքը հայ ժողովրդի արարող մտքի ու կառուցող ձեռքերի արգասիքն է, որն իր վրա կրում է Հայոց սուրբ, հավերժական գրերը եւ ազգային մշակույթի ու արվեստի անջնջելի կնիքը:

Խոսրով Խլղաթյան

10.qxd 23/05/2026 16:55 Page 4

ԾՈՎԻՆԱՐ ԳՅՈՒՂՈՒՄ 2018-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 12 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովինար գյուղում 2018-2025 թվականների ընթացքում սուբվենցիոն եւ պետական այլ ծրագրերով իրականացվել է սոցիալ-տնտեսական եւ կենսական նշանակության 12 ծրագիր, որոնց ուղղությամբ կատարված ներդրումների ընդհանուր գումարը կազմում է 3 միլիարդ 685 միլիոն 591 հազար դրամ:

12 ծրագրերից 10-ը սուբվենցիոն են, որոնց իրականացման ուղղությամբ ծախսվել է 1 միլիարդ 594 միլիոն 405 հազար դրամ: Պետական երկու ծրագրերից մեկով, 456 միլիոն 186 հազար դրամ արժեքով, կառուցվել է 7600 մետր երկարության ոռոգման ջրատար ցանց, իսկ մյուսով, 1 միլիարդ 635 միլիոն դրամ արժեքով, այժմ հիմքից կառուցվում է Ծովինարի միջնակարգ դպրոցի շենքը:

Իրականացված ծրագրերի արդյունքում 2018-2025 թվականների ընթացքում Ծովինարում կառուցվել է 16163 մետր ոռոգման, 18243 մետր խմելու ջրատար ցանցեր, 26499 մետր արտաքին լուսավորության ցանց, Արցախյան պատերազմներում զոհվածների հուշահամալիր, 650 խորանարդ մետր ծավալով խմելու ջրի երկու ջրամբար, 300 մետր գազատար, հիմնանորոգվել ներհամայնքային նշանակության 28015 մետր ճանապարհ, մանկապարտեզի եւ մշակույթի կենտրոնի շենքերը, սալարկվել է մշակույթի կենտրոնի դիմացի հրապարակը:

Ծովինարի մանկապարտեզը սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում հիմնանորոգվել է 2022-2023 թվականների ընթացքում եւ բացվել 2024 թվականի մայիսից: Այժմ մանկապարտեզում գործում է 3 խումբ, ուր հաճախում են նախադպրոցական տարիքի 90 երեխա:

Ծովինարի միջնակարգ դպրոցի նոր շենքի կառուցման աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի մարտ ամսից: Շինարարությունը նախատեսվում է ավարտի հասցնել 2027 թվականի սեպտեմբերին:

Սուբվենցիոն եւ պետական ծրագրերից բացի, 2024 թվականին Գեղարքունիք-Ֆրանսիայի Իզեի մարզ համագործակցության շրջանակներում, ֆրանսիական կողմի միջոցներով, հիմնանորոգվել եւ վերազինվել է Ծովինարի բուժամբուլատորիայի շենքը:

«Գեղամա աշխարհ»

ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆՈՒՄ 2018-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 36 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ



Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն գյուղում սուբվենցիոն ու պետական այլ ծրագրերով սոցիալ-տնտեսական եւ կենսական նշանակության 36 ծրագիր է իրականացվել, որոնց ուղղությամբ կատարված կապիտալ ներդրումները կազմել են 6 միլիարդ 399 միլիոն 787 հազար դրամ:

Սուբվենցիոն ու համայնքային ծրագրերի ուղղությամբ կատարված կապիտալ ներդրումները կազմել են 2 միլիարդ 573 միլիոն 526 հազար դրամ, պետական ծրագրերի իրականացմանն ուղղված կապիտալ ներդրումները՝ 3 միլիարդ 538 միլիոն 515 հազար դրամ:

Իրականացված ծրագրերի շնորհիվ 2018-2025 թվականներին Ներքին Գետաշենում կառուցվել է 36133 մետր ոռոգման, 38186 մետր խմելու ջրատարներ, 30476 մետր արտաքին լուսավորության ցանց, 7739 մետր գազատար, ոռոգման ջրի 1 խորքային հոր, հիմնանորոգվել միջհամայնքային ու ներհամայնքային նշանակության 23144 գծամետր ճանապարհ եւ գյուղի մշակույթի տան շենքը:

«300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում 2019 թվականից ընթացքի մեջ է գտնվում Ներքին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոցի նոր շենքի կառուցումը: 2018-2019 թվականներին Ներքին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոցի տարրական մասնաշենքի կառուցման համար պետբյուջեից հատկացվել է 287 միլիոն դրամ: Շինարարական աշխատանքներն ավարտվել են 2020 թվականին: 2021 թվականից մեկնարկել են դպրոցի մյուս մասնաշենքերի կառուցման աշխատանքները՝ 1 միլիարդ 750 միլիոն դրամ պայմանագրային արժեքով:

Արդի չափորոշիչներին համապատասխանող դպրոցի շինարարությունը նախատեսվում է ավարտի հասցնել 2026 թվականի դեկտեմբերին:

«Գեղամա աշխարհ»

ՁՈՐԱԳՅՈՒՂՈՒՄ 2018-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 27 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ձորագյուղ գյուղում 2018-2025 թվականներին սուբվենցիոն ու պետական այլ ծրագրերով սոցիալ-տնտեսական եւ կենսական նշանակության 27 ծրագիր է իրականացվել, որոնց ուղղությամբ կատարված ընդհանուր ներդրումները կազմել են 1 միլիարդ 940 միլիոն 208 հազար դրամ:

Իրականացված ծրագրերի արդյունքում Ձորագյուղում կառուցվել է 36205 մետր խմելու, 5396 մետր ոռոգման ջրատարներ, 7790 մետր արտաքին լուսավորության ցանց, 1150 մետր գազատար, 1 կամուրջ եւ հենապատ, մանկապարտեզի խաղահրապարակ, 200 խորանարդ մետր ծավալով օրվա կարգավորիչ ջրամբար, հիմնանորոգվել 6716 գծամետր ներհամայնքային նշանակության ճանապարհ, վերանորոգվել մշակույթի տունը: վերանորոգման ու կապիտալ նորոգման ընթացքի մեջ են հիմնական դպրոցի եւ մանկապարտեզի շենքերի շինարարական աշխատանքները:

Իրականացված ծրագրերից 25-ը սուբվենցիոն են, որոնց ուղղությամբ կատարված ներդրումները կազմել են 1 միլիարդ 345 միլիոն 208 հազար դրամ, իսկ երկուսը դեռ ընթացքի մեջ գտնվող պետական ծրագրեր են՝ 595 միլիոն դրամի ներդրմամբ, որոնց արդյունքում վերանորոգվում կամ կապիտալ նորոգման են ենթարկվում հիմնական դպրոցի եւ մանկապարտեզի շենքերը ՀՀ Կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում:

Ձորագյուղի հիմնական դպրոցի շենքի վերանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 303 միլիոն դրամ: Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի օգոստոսից եւ ավարտի կհասցվեն 2026 թվականի մայիս ամսին:

Ձորագյուղի մանկապարտեզի կապիտալ նորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 292 միլիոն դրամ: Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2026 թվականի հունվարից եւ կավարտվեն 130 աշխատանքային օրերի ընթացքում:

«Գեղամա աշխարհ»

ՄԵԾ ՄԱՍՐԻԿՈՒՄ ԸՆԹԱՆՈՒՄ ԵՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ գյուղում 2026 թվականի մարտ ամսից վերսկսվել եւ ընթանում են մշակույթի տան նորակառույց շենքի շինարարական աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, Մեծ Մասրիկի մշակույթի տան նոր շենքի կառուցման աշխատանքները մեկնարկել են 2019 թվականից, 150 միլիոն դրամ պայմանագրային արժեքով, որի 45 տոկոսը եղել է ՀՀ կառավարության, 55 տոկոսը՝ Մեծ Մասրիկի համայնքապետարանի մասնաբաժինը: Ծրագիրն իրականացվել է 2 փուլով՝ ընդգրկելով 2019-2020 թվականները, սակայն այն մնացել է անավարտ՝ պայմանավորված 2020 թվականի Համավարակով ու Արցախյան 44-օրյա պատերազմով:

Մեծ Մասրիկի մշակույթի տան նոր շենքի կառուցման շինարարությունն ավարտելու նպատակով ծրագիրը ՀՀ կառավարության կողմից հաստատվել է 2025 թվականին, շինարարական մրցույթը հայտարարվել նույն տարվա նոյեմբերին, իսկ շինաշխատանքների մեկնարկը տրվել է 2026 թվականի մարտին:

Շինարարության պայմանագրային արժեքը կազմում է 76 միլիոն դրամ, որի 45 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 55 տոկոսը՝ Վարդենիսի համայնքապետարանը:

Շինարարական աշխատանքներն իրականացնող «Սպիտակ Բազե» ՍՊԸ տնօրեն Վարդան Երանոսյանի տեղեկացմամբ՝ 2026 թվականի մայիսի 14-ի դրությամբ արդեն իրականացվել է աշխատանքների շուրջ 70 տոկոսը՝ տեղադրվել է շենքի տանիքը, ընթանում են ներքին հարդարման աշխատանքներ, ու առկա են բոլոր նախադրյալները՝ շինարությունն առաջիկա ամիսներին ամբողջությամբ ավարտի հասցնելու համար:

Ծրագրի իրականացման արդյունքում Մեծ Մասրիկ գյուղը կունենա արդի չափորոշիչներին համապատասխան մշակույթի տուն:

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ ԵՆ ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ԳԵՐԵԶՄԱՆՈՅԻ ՄՈՒՏՔԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզկենտրոն Գավառ քաղաքում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակում հիմնանորոգվում են Գավառ քաղաքի գերեզմանոցի՝ արեւելյան եւ արեւմտյան մուտքերն իրար կապող ճանապարհները:

Ինչպես տեղեկացրին Գավառի համայնքապետարանի աշխատակազմից, մուտքերի ճանապարհների հիմնանորոգմանը հաջորդելու են հիմնական ճանապարհին կապվող երկրորդական ճանապարհների նորոգման աշխատանքները:

Ծրագրի պայմանագրային արժեքը 66 միլիոն դրամ է, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Գավառի համայնքապետարանը:

Այժմ միաժամանակ ընթանում են հողաքանդման, բիտումի շերտի տեղադրման եւ ասֆալտապատման աշխատանքներ:

Հիմնանորոգումը նախատեսված է ավարտել մինչեւ մայիսի վերջ:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ն:

Ալվարդ Մանուկյան

10.qxd 23/05/2026 16:55 Page 5

ՄԱՐՏՈՒՆՈՒ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՍԱՆԵՐԸ ԴԱՐՁԵԼ ԵՆ «ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՐՈՒՆԴ» ԾՐԱԳՐԻ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ

Երեւանի «Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի է ունեցել «Արհեստական բանականության (ԱԲ) սերունդ» կրթական ծրագրի առաջին շրջանավարտների վկայականների հանձնման հանդիսավոր արարողությունը:

Ինչպես տեղեկացրին ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից, վկայականներ են ստացել Հայաստանի Հանրապետության տարբեր դպրոցների 207 աշակերտներ:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը վկայականների հանձնման արարողության ժամանակ նշել է, որ սա աշխարհում առաջին ծրագրերից է, որի միջոցով Արհեստական Բանականության կրթությունը մատուցվում է ազգային մակարդակով ու հանրակրթական համակարգում:

Ծրագիրն արդեն իսկ արժանացել է միջազգային հանրության ուշադրությանը՝ զբաղեցնելով 2-րդ տեղը ԱՄՆ-ում կայացած հեղինակավոր ASU+GSV մրցույթի «Ազդեցություն» կատեգորիայում:

Ծրագրի նպատակն է՝ պատրաստել մասնագետներ, որոնք պատրաստ կլինեն դիմակայել տեխնոլոգիական դարաշրջանի մարտահրավերներին:

Ծրագրի մասնակից դպրոցներից է նաեւ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի Տիգրան Աբրահամյանի անվան ավագ դպրոցը, որի սաները ստացան կրթական ծրագրի ավարտական վկայականները:

-Մեր դպրոցի ներկայացուցիչների մասնակցությունն այս միջոցառմանը եւս մեկ անգամ փաստում է, որ Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոցը քայլում է ժամանակին համընթաց եւ կերտում է գիտակ ու նորարար սերունդ: Շնորհավորում ենք մեր բոլոր շրջանավարտներին եւ մաղթում նորանոր հաջողություններ գիտության եւ տեխնոլոգիաների աշխարհում,-նշեց Մարտունու ավագ դպրոցի տնօրեն Վարդան Ավետիսյանը:

Արհեստական բանականության ծրագրի մասնակցության ու արդյունքների մասին իր տպավորություններով կիսվեց Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոցի մաթեմատիկայի եւ ԹԳՀԳ ուսուցիչ Էլմիրա Խաչատրյանը:

-Ի՞նչ տվեց ինձ Արհեստական բանականությունը: Տարիներ շարունակ մաթեմատիկան դասավանդել եմ այնպես, ինչպես բոլորը՝գրատախտակ, կավիճ, դասագիրք: Հետո եկավ Արհեստական բանականությունը: Եվ ամեն ինչ փոխվեց: Ոչ թե ես փոխվեցի, այլ ընդլայնեցի իմ հնարավորությունները, նորը սովորեցի. ԱԲ –ն ընգրկեցի իմ դասապրոցեսում՝ այն հետաքրքիր դարձնելու նպատակով: Դասապրոցեսում ավելացան տեսանյութեր, սահիկներ, պաստառներ, ինֆոգրաֆիկա եւ էլի այլ դիդակտիկ նյութեր,եւ այդ ամենը՝ որպեների ընթացքում: Մինչ ԱԲ-ն՝ ներկայացում պատրաստելը նշանակում էր՝ ժամերով աշխատել. ճիշտ գույն, ճիշտ տառատեսակ, ճիշտ դասավորություն, եւ այդ ամենը ձեռքով էի հավաքում:

Այժմ Canva AI-ով նախագծի պաստառ եմ ստեղծում 10 րոպեում եւ նույնը սովորեցնում աշակերտներիս, Gamma.app-ով՝ ամբողջ սահիկաշար՝ կառուցված, գունավոր, պրոֆեսիոնալ: Claude.ai-ն օգնում է գեղեցիկ ու ճիշտ շարադրված բովանդակություն ստանալ, իսկ ինֆոգրաֆիկայի համար կարճ, հստակ, տեսողականորեն ընկալելի տեքստ ունենալ: Ոչ թե ձեւաչափի վրա եմ ժամեր ծախսում , այլ բովանդակության: Սա է տարբերությունը: Աշակերտների ներկայացումները, հակածխախոտային բուկլետները, Սեւան լճի մասին ինֆոգրաֆիկաները եւ էլի շատ աշխատանքներ ԱԲ-ի հետ ավելի արագ, ավելի գեղեցիկ են ստացվում:

2023-24 ուստարում մեր դպրոցը ընդգրկվեց ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության եւ Հայաստանի գիտության եւ տեխնոլոգիաների հիմնադրամի (FAST) համագործակցությամբ ներդրված «ԱԲ սերունդ» դպրոցական ծրագրում, եւ ես անցա բազմաթիվ վերապատրաստումներ, որոնց համար շնորհակալ եմ FAST հիմնադրամին: Եվ եթե ինձ հիմա հարցնեն, թե ինչպես է ԱԲ-ն փոխում կրթությունը, ես կպատասխանեմ, որ ԱԲ-ն կրթությունը փոխում է 3 հիմնական մակարդակով՝ ուսուցման անհատականացում, գնահատման/հետադարձ կապի արագացում եւ նախագծային-ստեղծագործական աշխատանքի ընդլայնում՝ ուսուցչի դերը դարձնելով ավելի շատ մենթորական ու ուղղորդող:Այս երեք տարիների ընթացքում ես իմ աշխատանքային ընկերների հետ բազմաթիվ հետաքրքիր եւ բովանդակալից նախագծեր իրականացրի, որոնց ընթացքում սովորողները կառուցեցին դիագրամներ ու գրաֆիկներ ՝Սեւանի ջրի մակարդակի, ջերմաստիճանի, արեւային էներգիայի տվյալների հիման վրա՝կիրառելով իրենց Python իմացությունը եւ գրելով համապատասխան կոդեր՝ստացան տեսողական արդյունք: Սովորողները Python-ի միջոցով կատարեցին վիճակագրական վերլուծություններ՝ աշակերտական հարցման տվյալների վրա: Հարցման ֆայլերը դասակարգեցին եւ բաց պատասխանները կատեգորիաների բաժանեցին: Ինչը նախկինում Excel-ում ժամերով էր արվում՝Python-ում րոպեների հարց դարձավ: Եվ ԱԲ-ն ամեն քայլում մեր կողքին էր. բացատրում էր կոդը, ուղղում սխալները, առաջարկում ավելի լավ տարբերակ, այսինքն՝ԱԲ-ն կիրառել ենք ուսուցման նպատակով:

Եվ վերջապես, ԱԲ սովորելով, սկսեցինք տարբեր հավելվածներ ստեղծել, իսկ ԱԲ-ի ավարտական նախագիծը ամենամեծ նվերն է մեր համայնքին: «Կարտոֆիլի հիվանդությունների ճանաչման» նախագծում ես ու իմ աշակերտները ԱԲ մոդել կառուցեցինք: Սովորողները կիրառեցին մեքենայական ուսուցման իրենց գիտելիքները. կառուցեցին CNN մոդել, ուսուցանեցին եւ թեստավորեցին: Նախագծի արդյունքում ունեցանք հավելված, որը ճանաչում է կարտոֆիլի հիվանդությունը տերեւի նկարից եւ տրամադրում է համապատասխան խորհրդատվությունը: Ոգեւորությունը մեծ էր, եւ սովորողներին առաջարկեցինք իրենց աշխատանքը բաց կոդով տեղադրել Գիտհաբում: Այս աշխատանքից ոգեւորված՝ 11-րդ դասարանի աշակերտները սկսեցին իրենց նոր նախագիծը՝ ստեղծելով էներգախնայողության հաշվիչ : Նախագծի նպատակն էր՝ ուսումնասիրել տնային տնտեսությունների էներգասպառումը եւ գնահատել, թե ինչ գործոններ են առավել ազդում դրա վրա՝ հիմնվելով հարցաթերթիկի տվյալների եւ Python ծրագրավորման միջոցով կատարված վերլուծության վրա: Արդյունքում ստացել են հավելված, որը հնարավորություն կտա՝ ներմուծել կենցաղային սարքերը եւ դրանց օգտագործման ժամանակը եւ կվերադարձնի ծախսված գումարը: Այնուհետեւ հնարավորություն կտա ընտրել արեւային վահանակի հզորությունը, որը կգրոյացնի սպառված էներգիայի համար վճարված գումարը: Նշեմ, որ ԱԲ-ն տալիս է ուսուցիչներին ժամանակի խնայողություն՝ շաբաթական 5.9 ժամվարչական բեռի կրճատում, ավտոմատացված գնահատում,դասավանդման որակի 69 տոկոս բարելավում, առաջադիմության վերլուծություն, տվյալահեն որոշումներ, անհատականացված ուսուցում՝ անմիջական հետադարձ կապով՝ վայրկյանների ընթացքում 24/7 աջակցություն՝ ցանկացած ժամանակ, մատչելիության բարելավում բոլորի համար, հաստատություններին՝ռեսուրսների արդյունավետ օգտագործում, մասշտաբայնություն՝ ավելի շատ աշակերտներ, մրցակցային առավելություն:

Ամփոփելով այս ամենը, ասեմ, որ ԱԲ-ն ինձ տվեց...Երեխաների համար ազատ ժամանակ, ստեղծագործական նոր հնարավորություններ, վստահություն Python-ի նկատմամբ, ուսուցչի նոր դեր, ԱԲ մոդել կառուցելու կարողություն: Եվ ամենակարեւորը ՝ԱԲ-ն ինձ չփոխարինեց, չջնջեց ուսուցչի արժեքը, ընդհակառակը՝ ամրապնդեց այն,- նշեց Էլմիրա Խաչատրյանը:

Իր տպավորություններով մեզ հետ կիսվեց նաեւ ԱԲ հոսքի շրջանավարտ, Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոցի աշակերտ Էլենա Վարդանյանը:

-Երբ իմացա, որ մեր դպրոցում գործում է ԱԲ հոսք, ավելի շատ հետաքրքրությունից այնտեղ հայտնվեցի, քան գիտակցված ընտրությամբ: Բայց արդեն առաջին շաբաթներին հասկացա՝ սա ուրիշ մի բան է: Սկսեցինք խորացված հանրահաշվից: Ֆունկցիաներ, մատրիցներ, հավանականություններ, բայց ոչ որպես վերացական բանաձեւեր, այլ որպես գործիքներ, որոնք հետո իմաստ ձեռք բերեցին: Հետո եկավ Python-ը: Առաջին կոդի տողն ավելի երկար ժամանակ պահանջեց, քան ամբողջ դասը: Բայց ԱԲ-ն կողքիս էր. բացատրում էր, ուղղում, ցույց տալիս, թե ո՞ւր սխալ թույլ տվեցի՝ առանց ծաղրելու, առանց հեգնելու: Հետո եկան ԱԲ-ի հիմունքները, մեքենայական ուսուցումը, նեյրոնային ցանցերը: Ամեն թեմա նախորդի վրա էր կառուցվում, ամեն հմտություն հաջորդի հիմքն էր դառնում: Շաբաթներ անց ես արդեն հասկանում էի, թե ինչ է նշանակում մոդել ուսուցանել, ինչ է CNN-ը, ինչու է կարեւոր տվյալների բազմազանությունը: Ոչ թե անգիր, այլ հասկանալով, թե ինչու: Մեր նախագիծը իրական խնդիր լուծեց: Թիմով կառուցեցինք CNN մոդել, որը կարտոֆիլի տերեւի նկարից ճանաչում է հիվանդությունը: Հավաքեցինք պատկերներ, մշակեցինք տվյալները, ուսուցանեցինք մոդելը, թեստավորեցինք, ուղղեցինք, նորից թեստավորեցինք: Արդյունքում ստեղծեցինք հավելված. ֆերմերը տերեւի նկար է անում, հավելվածն ակնթարթորեն ճանաչում է հիվանդությունը եւ տրամադրում է խորհրդատվություն՝ ինչ անել, ինչով բուժել, ինչպես կանխել: Երբ ցույց տվեցի տանը, երկար նայեցին էկրանին, հետո ասացին. «Սա կիրառելի է»: Ճիշտ այդ պահին հասկացա՝ ինձ հաջողվեց: Աշխատանքը բաց կոդով տեղադրեցինք GitHub-ում՝ որպեսզի ուրիշները նույնպես կարողանան օգտվել կամ շարունակել զարգացնել: Ապա եկավ այն, ինչ չէի սպասում: Ավարտական նախագծի հանձնելուց հետո ստացա FAST հիմնադրամի ավարտական դիպլոմ: Եվ հետո Ֆրանսիական համալսարանի ընդունելություն, առանց քննությունների: ԱԲ-ն ինձ տվեց այն, ինչ ոչ մի դասագիրք չէր կարող տալ: Տվեց հարց տալու համարձակություն. «Ինչո՞ւ», «Ի՞նչ կլիներ, եթե», «Ի՞նչ կարող ենք ստեղծել»: Տվեց սխալվելու հանդուրժողականություն. մոդելը կոտրվում է, ուղղում ես, նորից ուսուցանում. սա ոչ թե ձախողում է, այլ մեթոդ: Տվեց թիմային աշխատանքի փորձ. մեր նախագծում ամեն ոք ուներ իր դերը, եւ ամեն ոք կարեւոր էր: Տվեց ճանապարհ. ոչ թե վկայական, ոչ թե գնահատական, այլ ապացույց, որ կարող եմ ստեղծել բան, որն աշխատում է եւ օգնում է իրական մարդկանց: ԱԲ-ն ինձ չփոխարինեց, չմտածեց իմ փոխարեն: Ընդհակառակը ՝ստիպեց ավելի շատ մտածել, ավելի խորը հարցեր տալ, ավելի իմաստալից ուսուցում ստանալ:

Ուսուցիչս կար, թիմս կար, ԱԲ-ն կար, եւ երեքը միասին, եւ ոչ ոք ավելորդ չէր: Ես ԱԲ հոսքի շրջանավարտ եմ: Ու հպարտ եմ դրանով,- ներկայացրեց Էլենա Վարդանյանը:

Խոսրով Խլղաթյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔՈՒՄ «ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՖՈՒՏԶԱԼԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳԱՎԱԹ» ՄՐՑԱՇԱՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼՈՒՄ ՀԱՂԹԵԼ Է ՄԱՐՏՈՒՆՈՒ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԹԻՄԸ

Գեղարքունիքի մարզում ավարտվել է «ՀՀ Վարչապետի ֆուտզալի դպրոցական գավաթ» մրցաշարի մարզային փուլը, որի արդյունքում հաղթող է ճանաչվել ու հանրապետական փուլի ուղեգիր նվաճել Մարտունի քաղաքի Մ. Մելիք-Շահումյանցի անվան թիվ 1 հիմնական դպրոցի թիմը:

Ինչպես տեղեկացրեց ՀՖՖ Գեղարքունիքի մարզի ներկայացուցիչ Կամո Մոսոյանը, մրցաշարն անցկացվել է Գավառ քաղաքի Գրիշա Ափրոյանի անվան մարզադպրոցի մարզադահլիճում: Հանրապետական փուլի ուղեգիրը վիճարկել են մրցաշարի մարզային փուլի արգելքը հաղթահարած ճամբարակ համայնքի Թթուջրի, Գավառ համայնքի Գեղարքունիք գյուղի, Սեւան համայնքի Լճաշեն գյուղի միջնակարգ եւ Մարտունի քաղաքի թիվ 1 հիմնական դպրոցների թիմերը: Որոշակի պատճառներով մրցավայր չի ժամանել Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ գյուղի միջնակարգ դպրոցի թիմը, որը հաղթահարել էր մրցաշարի համայնքային փուլի արգելքը:

Չորս թիմերի միջեւ անցկացված մրցումներում «ՀՀ Վարչապետի ֆուտզալի դպրոցական գավաթ» մրցաշարի հանրապետական փուլի ուղեգիր է նվաճել Մարտունու Մ. Մելիք-Շահումյանցի անվան թիվ 1 հիմնական դպրոցի թիմը:

Մրցաշարի հանրապետական փուլը կկայանա մայրաքաղաք Երեւանում, մայիս ամսին:

«Գեղամա աշխարհ»

10.qxd 23/05/2026 16:55 Page 6

ՀՀ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԱՄԱԶԴ ՂԱԼԱՄԲԱՐՅԱՆՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑՈՎ ԵՂԵԼ Է «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ» ՋՕԸ-ՈՒՄ

ՀՀ Ջրային կոմիտեի նախագահ Արամազդ Ղալամբարյանն աշխատանքային այց է կատարել Գեղարքունիքի մարզ՝ տեղում «Գեղարքունիք» ջրօգտագործողների ընկերության տնօրինության հետ քննարկելու մի շարք առաջնահերթ լուծում պահանջող հարցեր:

«Գեղարքունիք» ՋՕԸ գործադիր տնօրեն Արտաշ Սարդարյանի տեղեկացմամբ՝ հրավիրվել է խորհրդակցություն ՋՕԸ աշխատակիցների մասնակցությամբ: Այնուհետ ՋՕԸ գործադիր տնօրենի ուղեկցությամբ ՀՀ Ջրային կոմիտեի նախագահն ու տեղակալ Կարեն Դաղբաշյանն այցելել են «Գեղարքունիք» ՋՕԸ-ի սպասարկման տարածքներ, որտեղ նրանք ծանոթացել են ոռոգման հերթական շրջանի նախապատրաստական աշխատանքներին եւ հիդրոտեխնիկական կառույցների ընթացիկ վիճակին Մարտունու, Աստղաձորի, Զոլաքարի եւ Ծովինարի պոմպակայաններում:

Այցելություն է կատարվել նաեւ Աստղաձորի ապագա ջրամբարի թասի տարածքում: ՋՕԸ գործադիր տնօրենի ներկայացմամբ՝ նախատեսվող ջրամբարի կառուցման ու շահագործման դեպքում զգալիորեն կթեթեւանա Սեւանա լճից սնվող մի շարք պոմպակայանների ծանրաբեռնվածությունը, կխնայվի որոշակի քանակի էլեկտրաէներգիա:

Այցելությունը եզրափակվել է Ծովինար բնակավայրում, որտեղ ՀՀ Ջրային կոմիտեի ղեկավարն ու տեղակալը «Արփա–Սեւան» թիվ 2 թունելի ելքամասում դիտարկել են ջրանցքով Սեւանա լիճ տեղափոխվող ջրի ընթացքը եւ ջրաչափական դիտակետը:

«Գեղամա աշխարհ»

ՎԱՐԴԵՆԻՍՈՒՄ ՆՇՎԵԼ Է ԱԿԱՆՆԵՐԻ ՎՏԱՆԳԻ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԵՎ ՀԱԿԱԱԿԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքում Հայկական Կարմիր խաչի ընկերության Աղետների կառավարման բաժնի կողմից, Ռազմական զինամթերքով աղտոտվածության ծրագրի շրջանակում, կազմակերպվել է միջոցառում՝ նվիրված ՄԱԿ-ի կողմից նշվող Ականների վտանգի իրազեկման եւ հակաականային գործունեության միջազգային օրվան:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, միջոցառման նպատակն էր՝ բարձրացնել հանրության իրազեկվածությունը ականների եւ պայթյունավտանգ զինամթերքի վտանգի վերաբերյալ, խթանել անվտանգ վարքագծի գիտելիքների տարածումը, ընդգծել հակաականային գործունեության կարեւորությունը եւ հարգանքի տուրք մատուցել ականներից տուժած անձանց՝ նրանց պատմությունների միջոցով ամրապնդելով հանրային պատասխանատվության զգացումը:

Միջոցառմանը մասնակցել են Վարդենիսի համայնքապետարանի աշխատակիցներ, ականներով վտանգված բնակավայրերի վարչական ղեկավարները, հանրակրթական եւ արտադպրոցական հաստատությունների տնօրենները եւ ուսուցիչները, փրկարար ծառայության աշխատակիցները, ինչպես նաեւ համայնքային եւ կրթական ոլորտի այլ ներկայացուցիչներ:

Միջոցառումը բացել է ՀԿԽԸ Ռազմական զինամթերքով աղտոտվածության ծրագրի համակարգող Գայանե Սիմոնյանը, ով ներկաներին ներկայացրել է օրվա խորհուրդը, խոսել աշխարհում եւ Հայաստանում ականների եւ պայթյունավտանգ զինամթերքի վտանգի մասին՝ ընդգծելով շարունակական իրազեկման ու կանխարգելման կարեւորությունը: Նա նաեւ ներկայացրել է առաջիկայում մեկնարկող «Ռիսկերի իրազեկում եւ անվտանգ վարքագիծ ծրագիրը», որի նպատակն է՝ դպրոցներում եւ համայնքներում իրականացնել միջոցառումներ, որոնք կնպաստեն բնակչության պատրաստվածության եւ դիմակայունության բարձրացմանը: Գայանե Սիմոնյանը ներկայացրել է ծրագրում ներգրավված կամավորներին՝ կարեւորելով նրանց դերը համայնքներում գիտելիքի փոխանցման եւ անվտանգության մշակույթի ձեւավորման գործում:

Ողջույնի խոսքով հանդես է եկել համայնքի ղեկավարի խորհրդական Խաժակն Մկրտչյանը, ով կարեւորել է նման միջոցառումների անցկացումը՝ որպես համայնքային անվտանգության մշակույթի ձեւավորման կարեւոր բաղադրիչ:

Տպավորիչ ելույթով հանդես է եկել նախկին զինվորական, ականից տուժած Ռուբեն Փարսադանյանը, ով պատմել է իր կյանքի դժվարությունների, հաղթահարված մարտահրավերների եւ ձեռքբերումների մասին՝ միաժամանակ ներկաներին փոխանցելով անվտանգ վարքագծի կարեւոր ուղերձներ:

Միջոցառման ընթացքում ցուցադրվել են նաեւ վավերագրական կարճամետրաժ ֆիլմեր ականներից եւ պայթյունավտանգ զինամթերքից տուժած անձանց մասին, որոնք եւս մեկ անգամ ընդգծել են իրազեկման եւ մարդասիրական արձագանքի կարեւորությունը:

Միջոցառման երկրորդ հատվածում Վարդենիս քաղաքի թիվ 1 մանկական երաժշտական դպրոցի սաները հանդես են եկել երաժշտական կատարումներով:

«Գեղամա աշխարհ»

ԳԱՎԱՌԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ԸՆԹԱՆՈՒՄ ԵՆ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԱՌԿԱ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Վերջին շաբաթվա ընթացքում Գավառի կենտրոնական հրապարակում բարեկարգման եւ առկա համակարգերի արդիականացման ակտիվ աշխատանքներ են ընթանում:

Ներդրվում է ոռոգման ավտոմատ համակարգ՝ ժամանակակից լուծումներով, արդիականացվում է էլեկտրամատակարարման ցանցը: Վերջիններիս գործող համակարգերը տարիների ընթացքում ենթարկվել էին տարբեր վնասվածքների: Իրականացվում է նաեւ այս համակարգերի ստորգետնյա կայանի կառուցում: Քաղաքի կենտրոնական հրապարակում կատարվում են նաեւ բարեկարգման աշխատանքներ. նորացվում է առկա գազոնի շերտը, նախատեսվում է չորացած ծառերի փոխարինում նորերով: Այս աշխատանքները նախատեսված է ավարտել մինչ մայիսի վերջ: Թվարկված աշխատանքների իրականացման համար Գավառ համայնքի 2026 թվականի բյուջեից հատկացվելու է 28 միլիոն դրամ:

Աշխատանքների ավարտից հետո կգործարկվեն նաեւ շատրվանները, եւ Գավառի կենտրոնական հրապարակը այցելուներին կներկայանա իր ողջ շքեղությամբ:

Ալվարդ Մանուկյան

ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔՈՒՄ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎԵԼ Է ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ 5 ՇԵՆՔԻ ՏԱՆԻՔ ԵՎ ՄՈՒՏՔԵՐ

Գավառ քաղաքում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում հիմնանորոգվել է բազմաբնակարան 5 շենքի տանիք եւ մուտքեր, 6 շենքերում էլ անցկացվել է արտաքին լուսավորության ցանց, եւս երկու շենքերում նորոգվել են պատշգամբները:

Սուբվենցիոն ծրագրի շրջանակներում 2025 թվականի սեպտեմբերից մինչ 2026 թվականի ապրիլի 30-ն ընկած ժամանակահատվածում Գավառ քաղաքի Արամայիս Ոսկանյան 6, Արամայիս Ոսկանյան 11, Ազատության 1 նրբանցք 1 փակուղի թիվ 2, Ազատության փողոց թիվ 14 եւ Մովսիսյան փողոց թիվ 1 բազմաբնակարան բնակելի շենքերում իրականացվել է մուտքերի եւ տանիքների հիմնանորոգում: Տանիքների հիմնանորոգման մակերեսը կազմել է 3900 քառակուսի մետր:

Արտաքին լուսավորության ցանց է անցկացվել Գավառ քաղաքի Ազատության 2-րդ փողոց 2-րդ փակուղի թիվ 4, Ազատության 2-րդ փողոց թիվ 2 եւ Ազատության փողոց թիվ 14, Ազատության 2-րդ փակուղի թիվ 4 բազմաբնակարան բնակելի շենքերում եւ Ազատության փողոցի հենապատի երկայնքով, շուրջ 320 գծամետր երկարությամբ:

Նույն ծրագրի շրջանակներում նորոգվել են Գավառ քաղաքի Ազատության փողոցի թիվ 13 եւ 14 բազմաբնակարան բնակելի շենքերի պատշգամբները:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 163 միլիոն 342 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացրել է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Գավառի համայնքապետարանը:

Ալվարդ Մանուկյան

ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔՈՒՄ ԸՆԹԱՆՈՒՄ ԵՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Գեղարքունիքի մարզկենտրոն Գավառ քաղաքում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում շարունակվում են ճանապարհաշինական աշխատանքները Միքայելյան փողոցում, ավարտական փուլում են գտնվում 5 փողոցների հիմնանորոգման աշխատանքները:

Գավառ քաղաքի Միքայելյան փողոցի հիմնանորոգման աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի ապրիլից եւ իրականացվել երկու փուլով: 2025 թվականին իրականացվել է աշխատանքների շուրջ 50 տոկոսը: Միքայելյան փողոցի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 435 միլիոն դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Գավառի համայնքապետարանը: Ծրագրով նախատեսվում է Միքայելյան փողոցի եւ նույն փողոցի վրա գտնվող թիվ 16, 18, 20 բազմաբնակարան բնակելի շենքերի բակերի ասֆալտապատում՝ 1,5 կիլոմետր երկարությամբ, 14 հազար քառակուսի մակերեսով եւ մայթերի ու ջրահեռացման ներքին համակարգի կառուցում: Աշխատանքներն ընդհատվել են 2025 թվականի վերջերին, եղանակային պայմաններից ելնելով, ու վերսկսվել 2026 թվականի ապրիլից: 2026 թվականի մայիսի 8-ի դրությամբ ծրագիրն իրականացված է շուրջ 80 տոկոսով:

2025 թվականի սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ավարտական փուլում են գտնվում Գավառ քաղաքի Իսահակյան փողոցի, Իսահակյան փողոցի 1-ին եւ 2-րդ նրբանցքների, Սայադյան փողոցի 2-րդ նրբանցքի, Կոլոտի Հայրապետ, Զորավար Անդրանիկ փողոցների հիմնանորոգման աշխատանքները: Ծրագրի պայմանագրային արժեքը կազմել է 63 միլիոն 733 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացրել է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Գավառի համայնքապետարանը: Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի սեպտեմբերից եւ ավարտվել 2026 թվականի ապրիլի վերջին:

Ալվարդ Մանուկյան

10.qxd 23/05/2026 16:55 Page 7

ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

/սկիզբը՝ նախորդ համարներում/

Այս տեսանկյունից հաստատուն չէ նաեւ ռուսական միջավայրը, ուստի, Անտոնիոնիի ֆիլմը չհավանելուց հետո բնական է, որ Արմենակ Մնացականյանը մեծ ջանքեր պետք է գործադրեր Զուսեւին բացատրելու, որ թռչունների երամը բաղկացած է բազմաթիվ թռչուններից եւ, որ միայնակ թռչել եւ եգիպտոս հասնելն ամեն թռչնի մենաշնորհը չէ: «Երամը մի մարմին է, այդ մարմի՞նն ունի եգիպտոսը գտնելու բնազդը»: Հետեւաբար, եթե կինոողեկավարությունն էլ, ինչպես Իվան Միխայլովիչը, Մնացականյանի սցենարը անվաներ «գյուղական խորիմաստ ապուշություն» եւ շարունակ համոզեր՝ փոփոխել այն, միեւնույն է, Մնացականյանը չէր ցանկանալու գնալ այդ քայլին: Նա շտկումներ չէր անելու՝ եթե անգամ իրեն հեռացնելու լինեին: Նրա սցենարը վիճելի էր այն պարզ ճշմարտության համար, որ հանդես էր գալիս հայկական ջարդերի դեմ: Նա ընդունակ չէր ընբռնելու իր առջեւ ծառացած՝ «մեր ջարդերի դեմ չգրենք» տխուր փաստը, իսկ գերմանական ֆաշիզմի դեմ գրելը ռուսական շովինիստական շրջանակների համար անհրաժեշտություն էր եւ այն էր դուրս գալիս, որ՝ «...Պանթուրքիզմի հարցը միայն տեղական նացիոնալիզմի հարց էր կամ կարողացավ միայն տեղական դրսեւորում ունենալ, ֆաշիզմն այնինչ, ահաահա դառնում էր համաշխարհային ժանտախտ»: Եղբայրական եւ տիրական Ռուսաստանում Արմենակ Մնացականյանը դեմ առ դեմ պայքարի մեջ է մտել մեկի հետ, ով ֆաշիզմի դեմ գրելն առավել կարեւոր է համարում, քան պանթուրքական երախն ընկած, աշխարհի ուշադրությանը կարոտ հայազգի երկու միլիոնի հասնող զոհերի: Այդ մեկը ենթադրում է, որ հանդիսականը չի հասկանալու՝ խոսքն ինչ հիմարության եւ ինչ զոհի մասին է: Միակ ճշմարիտ խոսքը, որ դուրս է գալիս Միխայլովիչի բերանից, այն է, որ սովետական բանակին մեկ ու կես միլիոնից երեք հարյուր հազարանոց զորք տված ազգը, եթե ժամանակին այդպիսի բանակ ունենար՝ Քեմալիզ՝ դժվարությամբ, բայց կհաղթեր: Եթե Մնացականյանի համար՝ գրել ազգային ողբերգության մասին նշանակում է՝ գրել խղճի, վերաբերմունքի սեփական անձի մասին, ապա Միխայլովիչի համար էլ՝ գրել ֆաշիզմի դեմ նշանակում է՝ կարողանալ կինոն աշխարհի մեջ տեսնել: Անհույս գործ էր կարծելը, թե նրա նման մի մարդ երբեւէ կհասկանար, որ նման մի հարց Մնացականյանի համար այնքան կարեւոր եւ սովորական է, այնքան հարազատ եւ անձնական է, եւ օրհասական է, որքան, օրինակ՝ ինքնաճանաչողության ճանապարհով գնալը եւ ուրիշին սեփական անձը ճանաչելի դարձնելը: «Կողմերի դիրքորոշումը որոշ առումով փոխբացառող է, որքան Մնացականյանի համար անընդունելի են միջավայրի բարոյական ընբռնումները եւ դրանց ուղղակի դրսեւորումները, միջավայրին նույնքան խորթ է հերոսի ներքին ուղղվածությունը, բարոյական կողմնորոշումը»,-գրում է Ս. Փանոսյանը: Վիպակի ընթացքը որքան երկարում, այնքան ավելի ու ավելի է մատնանշում Ժաննայի ու Մարչելոյի պես անկման ջրափոսի մեջ հայտնված, արտաքին աշխարհի եւ Մնացականյանի բնույթն ունեցող անհատների ահռելի հեռավորությունն ու զանազանությունը:

Կինոյի ասպիրանտ Եվան ազգությամբ ռուս է եւ Նիցշե է կարդում, հայազգի Մնացականյանը՝ Թումանյան: Այս հանգամանքը, որքան պարզ, նույնքան էլ բարդ է իր ներքին ակնարկներով: Մնացականյանն ուղիղ նշանակետին է դիպչում՝ ներկայանալով ազգային բանաստեղծի, հասարակական գործչի միջոցով, մինչդեռ զրուցակցի հայացքը, թեեւ միջազգային ոլորտներում է, սակայն ազգայինի, սեփականի գիտակցությամբ չի առանձնանում: Բնական է, որ նման միջավայրի մարդիկ չէին հասկանալու Մնացականյանի թեմատիկ ընտրությունը՝ եղեռն եւ ոչ թե ֆաշիզմ: Եվան նույնպես վատ է հասկանում իր հայազգի ծանոթի հայացքներն ու ստեղծագործական գաղափարները: Նա դժվարանում է ըմբռնել նաեւ վերջինիս համեստությունը: Այդ է պատճառը, որ խորհուրդ է տալիս նրան դասերից հետո անելիքները հանրակացարանից հեռու որոնել, մինչդեռ Մնացականյանը նախընտրում է հանրակացարանի ներսում, իր գործերի հետ լինել: Մնացականյանն ընդունակ է հեռահար հայացքով գնահատելու իրեն շրջապատող աշխարհը, որն ընդունակ չէ խորքում տեսնելու եւ ըմբռնելու իր հետաքրքրությունները, որոնք հասարակ բաներ չեն. «Ինչը քեզ համար թանկ էր՝ էժանացնում, հասարակացնում, ծամած ծամոն են դարձնում»:

Մաթեւոսյանի հերոսը չի կարող ընկերներ ունենալ մի միջավայրում, որտեղ ապրողների գիտակցությանը խորթ է պարզ, մարդկային վարքագիծը, որտեղ, եթե մարդը չի աշխատել՝ ամաչում է հացը կիսելուց, եթե իրեն հայտնի մտքերի հեղինակն ինքը չէ՝ դրանք իր անունից չի հայտնում, այլ անորոշ անձանց, եթե ակտիվորեն հանդես չի եկել աշխատանքի ու ընկերության մեջ՝ իրեն արժանի չի համարում «կնոջ ծոցը մտնել»: Մնացականյանն իր հերթին չի կարող հասկանալ այս որակների հակադիր դրսեւորումներով առաջնորդվողներին՝ չաշխատողներին, հաշիշամոլներին ու խժռողներին, դանակի սպառնալիքով

կնոջից պարգեւ պահանջողներին:

Մնացականյանի կինը՝ Հասմիկը եւ սիրելի երեխաները հերոսի հիշողության մեջ են, սակայն իր հեռավորությունից նա ոչինչ չի արել ընտանիքի համար, եթե չասենք, որ կնոջն հասցեագրված հեռագրով հարյուր ռուբլի գումար է խնդրել: Այդուհանդերձ, երկու կողմերն էլ իրենց ընթացքի մեջ խաղաղ են, որովհետեւ գնացողը գործով է գնացել, գործով է զբաղվելու՝ վերադառնա, իսկ մնացողներն աշխատելու են, որպեսզի հոգան եւ՛ իրենց հոգսերը, եւ՛ հեռավոր Մոսկվա հասած հարազատի հոգսերը: Մնացականյանը լավ գիտի, որ իր ու Օմակուտի միջեւ հետաքրքրության կապեր կան, իր ու Օմակուտի իր հարազատների միջեւ սիրո եւ կարոտի բազում առիթներ, իր ու հարազատների կապը մեկ բառով կոչվում է ընտանիք, արտաքին աշխարհում ոչ ոք ավելի լավ չի կարող հասկանալ այդ բառի իմաստը, քան ինքը: «Իմ երեխաների մայրը սիրուն բառերով նամակ չի ուղարկել ինձ՝ ծանրոց է ուղարկել, տղայիս համար բրդե հագուստ չի առել՝ ինձ համար ապխտել, ապխտած սուկի է ուղարկել, խշխշան ընկույզ եւ հուրհրան կոնյակ, այդ ապուխտը անցած աշնան ամբողջ փափուկ արեւը, փշատի բուրումով ներծծված արեւը, արարատյան պղպեղի կատաղությունը, նախճավանյան հազարամյա արեւի համը հավաքել էր իր մեջ...»:

Վիպակի հերոսի մտահորիզոնը արտաքին աշխարհին անծանոթ, տիեզերական ուրիշ տարածություններ ունի իր մեջ: Նրա մտապատկերում օրորոցի որդու անատամ ժպիտն է, մանկահասակ սիրառատ դստեր մեծահոգությունը, որը թաթերի վրա դուրս է գնում սենյակից, որպեսզի եղբայրը քնի, եւ «ընտանիքի այդ դաշինքը ժպիտով գուրգուրում է Հասմիկը»: Նրա «ես»-ը համառ է:

Մաթեւոսյանը մեր կողմից նկատված պարզորոշ օրինակներով մերժում է Արեւմտյան կապիտալի աշխարհը, այնտեղ օրեցօր խորտակվող մարդկային հարաբերությունները եւ ժամանակի մեջ տարրալուծվող ընտանիքների կաղապարը: Այսպիսի ընտանիքների տարրերն ի վերջո նմանվում են եգիպտոսը միայնակ փնտրող թռչնի: Հեղինակը խոր ընդգծումներով բացահայտում է նաեւ ռուսական մեծապետական հայացքները փոքր ազգերի նկատմամբ:

Հայոց մեջ, հայկական ընտանիքում կինը մեծ առաքելություն ունի կատարելու: Մաթեւոսյանական մայրը ամենից առաջ խոհեմության խորհրդանիշ է: Նրանում մեկտեղված են համեստ, հնազանդ, կինը, սիրառատ ու ջերմ մայրը, հյուրընկալ, մարդասեր տանտիրուհին: Այս առաքելությունը հաջողությամբ իրականացնում է նանը: Իր խստությամբ եւ զգոնությամբ նա փորձում է իր միջավայրի զավակը դարձնել նաեւ հարսներին: Սակայն ազնվականությունը արմատական երեւույթ է, այն չի ընդօրինակվում, այն փոխանցվում, վերարտադրվում է գենետիկորեն, հոգեմտավոր հիշողությամբ: Այս իմաստով Աղունը հավատարիմ է մնում իր արյանը, իր գենին, իր տեսակին, որի մեջ խաղաղության պակաս եւ ագրեսիվության ավելցուկ կա, ներողամտության սակավություն եւ դիմադրության անընդհատություն կա: Աղունի գործնական բնույթի առաջ բոլոր հանգամանքները առ ոչինչ են դառնում: Կողմերից եւ ոչ մեկի համար հեշտ չի եղել, սակայն նանի ավանդական հայացքները՝ լռելու կարողությունը, սեփական ցավի համար ինքնուրույն դարման գտնելը, միջավայրին հարմարվելը, հանդուրժողականությունը, ծանր կյանքին թեթեւ աչքով նայելը, նրան հաղթանակած են դուրս բերել կյանքի որոգայթներից:

«Օառերի» հերոսուհին աղաղակող տեսակ է: Նրա մեջ երկմտել-կշռադատելու խոհեմություն չկա: Նա ամեն բանի լավն է ակնկալում իր զավակի համար, սակայն նրան ուղղորդում է անազնիվ ճանապարհով: Հերոսուհու խորհուրդները խիստ սուբյեկտիվ են: Դրանց իրականացումը կարող է բավարարել անհատի պահանջները, բայց ոչ միջավայրի, մինչդեռ մարդը հասարակության մասնիկն է: Մյուս կողմից, հիշատակվող սկզբունքներով ապրող անհատը՝ Իշխանը, կործանված, պարտված մարդ է, ուստի նրան ընդօրինակելը պարզապես սխալմունք է:

Վարդոյի մարդկային որակները ավանդականության արտահայտություններ եւ խոհեմ կնոջ վարքուբարք ունեն իրենց մեջ: Փոխվել են մարդիկ, փոխվել են ժամանակները, սակայն առանձին անհատների մեջ անփոփոխ են մնացել այնպիսի սրբազան որակներ, որոնք ծառայեցվում են հօգուտ հանրային շահի:

Ռուզան Վարդանյան

ՄԵՎԱՆՅԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ ՓԱՅԼՈՒՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԵՆ ՅՈՒՅՑ ՏՎԵԼ ՀՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ K-1 ԵՎ ՔԻՔԲՈՔՍԻՆԳԻ ԱՇԽԱՐՀԻ ԲԱՑ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի մարզիկները փայլուն արդյունքներ են ապահովել Հունաստանում կայացած K-1 եւ քիքբոքսինգի աշխարհի բաց առաջնություններում:

Մայիսի 8-13-ը Հունաստանի Սերես քաղաքում անցկացվել են K-1 եւ քիքբոքսինգի աշխարհի բաց առաջնություններ, որտեղ հիանալի է հանդես եկել Սեւանի K-1 էդգար մարզասրահի ֆեդերացիայի եւ Սեւանի Նորիկ Դագարյանի անվան մարզադպրոցի չորս մարզիկից բաղկացած թիմը:

Նպատակասլաց մարզումների շնորհիվ չորս մարզիկ էլ դարձել են աշխարհի չեմպիոններ, իսկ 13 մարզիկից բաղկացած Հայաստանի թիմը ընդհանուր հաշվարկում գրավել է առաջին հորիզոնականը:

Սեւանցի չեմպիոններն են Ռազմիկ Շուշանյանը, Հովսեփ Ղարիբյանը, Լեւոն Խաչատրյանը, Վահե Խաչատրյանը, որոնք 30 երկիր ներկայացնող 2500 մասնակիցների մեջ փայլել են իրենց վարպետությամբ եւ պատրաստվածությամբ:

Ռազմիկ Շուշանյանը K-1 բաժնում հաղթել է Հունաստանի մարզիկին, իսկ քիքբոքսինգի բաժնում նա նաեւ եզրափակչում հաղթել է Կիպրոսի մարզիկին:

Հովսեփ Ղարիբյանը K-1 դիվիզիոնում հաղթել է Ալբանիայի մարզիկին, իսկ քիքբոքսինգի դիվիզիոնի եզրափակչում նոկաուտով հաղթել է Կիպրոսի մարզիկին:

Լեւոն Խաչատրյանը եզրափակչում հաղթել է Վրաստանի մարզիկին եւ դարձել չեմպիոն:

Վահե Խաչատրյանը եզրափակչում հաղթել է Անգլիայի ներկայացուցչին եւ դարձել չեմպիոն:

Նման արդյունքները ոչ միայն տպավորիչ են, այլ նաեւ բոլորիս հպարտություն ու ուրախություն պատճառող: Իսկ այս ամենը նպատակասլաց, ջանադիր աշխատանքի արդյունք է, որն իրականացնում են մեր մարզիչները եւ մարզիկները:

Արմինե Ղուկասյան

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՆ ԸՆԴՈՒՆԵԼ ԵՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼ Է ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐԵՐՈՒՄ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՐԱՆՑԱԾ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ

Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանն ընդունել եւ պարգեւատրել է հանրապետական եւ միջազգային մարզական մրցաշարերում մրցանակային տեղեր զբաղեցրած մարզիկներին:

Պարգեւատրված մարզիկներն են՝ Հայաստանի խառը մենամարտերի հավաքականի մարզիկ, 2025 թվականի մեծահասակների աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր Արթուր Ասոյանը, Գավառի Գրիշա Ափրոյանի անվան մարզադպրոցի Գանձակի տարածքային ստորաբաժանման Այկիկենդո կարատեի մարզիկներ՝ 2025 թվականի՝ K1 Կովկասի առաջնությունում 1-ին եւ 2-րդ տեղեր զբաղեցրած Դավիթ Գաբրիլյանը, Նարեկ Բահրիկյանը, 2025 թվականի աշխարհի Քիքբոքսինգի առաջնության 3-րդ մրցանակակիր Խաչիկ Ասատրյանը եւ Գավառի Գրիշա Ափրոյանի անվան մարզադպրոցի Գանձակի տարածքային ստորաբաժանման Այկիկենդո կարատեի մարզիչ Արաքս Մարգարյանը:

Գավառի համայնքապետարանի սպորտի հարցերով պատասխանատու Նարեկ Մուրադյանը ներկայացրել է մարզիկների 2025թվականի ձեռքբերումները եւ 2026-ի ծրագրերը:

Համայնքի ղեկավարը շնորհավորել է մարզիկներին եւ նրանց հանձնել պատվոգրեր ու դրամական պարգեւներ:

Միշտ հպարտանում եմ Գավառ համայնքի մարզիկների հաջողություններով ու խրախուսում նրանց, ովքեր մեր համայնքի անունը հնչեցնում են միջազգային մրցասպարեզներում՝ բարձր պահելով նրա պատիվն ու հեղինակությունը: Հավատացած եմ, որ առաջիկայում էլ դուք կապահովեք բարձր արդյունքներ միջազգային հերթական մրցաշարերում,-նշել է Գուրգեն Մարտիրոսյանը:

Ալվարդ Մանուկյան

10.qxd 23/05/2026 16:55 Page 8

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔՈՒՄ «ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ» ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԽՃՈՒՂԱՎԱԶՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ՀԱՂԹՈՂ Է ՃԱՆԱՉՎԵԼ ԾԱԿՔԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԹԻՄԸ

2026 թվականի մայիսի 13-ին Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Օովինար գյուղին հարակից անտառային տարածքի 5 կիլոմետրանոց արահետային խճուղում կազմակերպվել եւ անցկացվել է «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» դպրոցականների թիմային խճուղավազքի մրցումների մարզային փուլը:

Մրցումներն անցկացվել են թիմային մրցակարգով: Թիմի կազմում ընդգրկվել են նույն դպրոցի 7 աշակերտներ, այդ թվում՝ 2 աղջիկ եւ 5 տղա: Մրցապայքարն ավարտված է համարվել, եթե թիմի բոլոր անդամները հաղթահարել են 5 կիլոմետրանոց ճանապարհահատվածը, հակառակ դեպքում թիմի արդյունքները զրոյացվել է: Մարզային փուլին մասնակցության հայտ

են ներկայացրել մարզի 53 դպրոցական թիմեր՝ նախորդ տարվա 39-ի փոխարեն: Թիմերի մեծ մասը կարողացել են ավարտել մրցապայքարը, ինչի արդյունքում առաջին տեղը գրավել է Օակքարի միջնակարգ դպրոցի թիմը: Երկրորդ հորիզոնականում Վաղաշենի միջնակարգ դպրոցի թիմն էր, իսկ երրորդ հորիզոնականում՝ Թթուջրի միջնակարգ դպրոցի թիմը:

Խճուղավազքի մասնակիցների անվտանգությունն ապահովել են Մարտունու համայնքային ոստիկանության աշխատակիցները, իսկ առաջին բուժօգնությունը՝ Մարտունու շտապ օգնության ծառայության բուժանձնակազմը: 1-ին, 2-րդ, 3-րդ տեղեր գրաված թիմերին եւ թիմերի անդամներին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության կողմից հանձնվել են հավաստագրեր:

Մարզային փուլի հաղթող ճանաչված Օակքարի միջնակարգ դպրոցի թիմը ՀՀ Գեղարքունիքի մարզը կներկայացնի «ՀՀ Վարչապետի գավաթ» դպրոցականների թիմային խճուղավազքի եզրափակիչ փուլում, որը տեղի կունենա 2026 թվականի մայիսի 29-30-ին, Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Պարզ լիճ տանող ճանապարհահատվածի եւ անտառային արահետների 5 կիլոմետրանոց հատվածում:

Գեղամ Չարվադարյան

ՎԱՐԴԵՆԻՍՈՒՄ ԵՎ ԳԱՎԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵՑ «ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ» ՍԻՐՈՂԱԿԱՆ ԽՃՈՒՂԱՅԻՆ ՀԵԾԱՆՎԱՎԱԶՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՓՈՒԼԸ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս եւ Գավառ համայնքներում անցկացվել է «ՀՀ վարչապետի գավաթ» սիրողական խճուղային հեծանվավազքի համայնքային փուլը:

Մրցաշարն անցկացվել է երկու տարիքային խմբերով, որին մասնակցել են Վարդենիս եւ Գավառ համայնքների հանրակրթական դպրոցների 7-9-րդ եւ 10-12-րդ դասարանների աշակերտներից կազմված հավաքական թիմերը՝ հաղթահարելով 25 կմ երկարությամբ խճուղային երթուղին:

Վարդենիսում մրցման մեկնարկը տրվել է Մեծ Մասրիկ բնակավայրից, իսկ ավարտը՝ Դարանակ բնակավայրի սկզբնամասում:

7-9-րդ դասարանների մրցապայքարում առաջին տեղը գրավել է Լուսակունքի միջնակարգ դպրոցի թիմը, 2-րդ տեղը՝ Լճավանի միջնակարգ դպրոցի թիմը, 3-րդ տեղը՝ Շատջրեքի միջնակարգ դպրոցի թիմը:

10-12-րդ դասարանների մրցապայքարում 1-ին տեղը գրավել է Լուսակունքի միջնակարգ դպրոցի թիմը, 2-րդ տեղը՝ Մեծ Մասրիկի միջնակարգ դպրոցի

թիմը, 3-րդ տեղը՝ Փոքր Մասրիկի միջնակարգ դպրոցի թիմը:

Գավառ համայնքում մրցաշարի մեկնարկը տրվել է Նորատուս գյուղի մոտից եւ ավարտվել Մարտունի համայնքի Լիճք գյուղի մոտ, 25 կիլոմետր երկարությամբ:

7-9-րդ դասարանների տարիքային խմբում առաջին տեղը գրավել է Գավառի թիվ 3 հիմնական դպրոցի թիմը, 2-րդ եւ 3-րդ տեղերը համապատասխանաբար զբաղեցրել են Գանձակի թիվ 1 եւ թիվ 2 միջնակարգ դպրոցների թիմերը:

10-12-րդ դասարանների տարիքային խմբում հաղթող է ճանաչվել Օովազարդի միջնակարգ դպրոցի թիմը: 2-րդ եւ 3-րդ տեղերը համապատասխանաբար զբաղեցրել են Գանձակի թիվ 2 եւ Գավառի թիվ 2 միջնակարգ դպրոցների թիմերը:

Սիրողական խճուղային հեծանվավազքի մրցաշարի համայնքային փուլում մրցանակային տեղեր զբաղեցրած թիմերը կմասնակցեն մրցաշարի մարզային փուլին, որը կկայանա 2026 թվականի մայիսի 27-ին:

Գեղամ Չարվադարյան

ՎԱՐԴԵՆԻԿԻ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԹԻՄԸ ՃԱՆԱՉՎԵԼ Է ՀՀ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՇԱԽՄԱՏԻ 20-ՐԴ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ՀԱՂԹՈՂ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վարդենիկ գյուղի կրթահամալիրի թիմը ճանաչվել է ՀՀ դպրոցականների շախմատի 20-րդ օլիմպիադայի Գեղարքունիքի մարզային փուլի հաղթող:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ԿՄՍ վարչությունից, ՀՀ դպրոցականների շախմատի 20-րդ օլիմպիադան Գեղարքունիքի մարզում մեկնարկել է 2026 թվականի մարտ ամսից, որի ներդպրոցական փուլին մասնակցել են շուրջ 2600 պատանիներ ու աղջիկներ: Այս փուլում ձեւավորվել են դպրոցների հավաքական թիմերը, որոնք ապրիլի 25-ից մայիսի 8-ն ընկած ժամանակահատվածում մասնակցել են օլիմպիադայի Գավառի, Մարտունու, Սեւանի, Ճամբարակի եւ Վարդենիսի համայնքային փուլերին:

ՀՀ դպրոցականների շախմատի 20-րդ օլիմպիադայի Գեղարքունիքի մարզային փուլի մրցումներն անցկացվեցվել է 2026 թվականի մայիսի 13-ին՝ Գավառի Պ. Ղանդիլյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցում, որին մասնակցել են համայնքային փուլում հաղթող ճանաչված Գավառի թիվ 4, Ճամբարակի թիվ 2, Վարդենիսի թիվ 2, Սեւանի թիվ 3

հիմնական դպրոցների եւ Վարդենիկի կրթահամալիրի հավաքական թիմերը: Մրցաշարին մասնակցել են մինչեւ 14 տարեկան դպրոցականները: Օլիմպիադան անցկացվել է թիմային հաշվարկով, ընդ որում թիմը բաղկացած է եղել տվյալ դպրոցի 4 աշակերտներից, որոնցից առնվազը 1-ը՝ աղջիկ: Այն անցկացվել է ՖԻԴԵ-ի արագ շախմատի կանոններով, շրջանաձեւ, որի ընթացքում խաղացողին տրվել է 10 րոպե մինչեւ խաղի ավարտը՝ յուրաքանչյուր քայլի համար 5 վայրկյան հավելումով: Մրցապայքարի արդյունքում հաղթող է ճանաչվել Վարդենիկի կրթահամալիրի հավաքական թիմը (մարզիչ՝ Սամվել Արզումանյան): Երկրոդ տեղը գրավել է Գավառի թիվ 4 հիմնական դպրոցի թիմը (մարզիչ՝ Արեւ Արզաքանցյան), իսկ երրորդ տեղը՝ Ճամբարակի Մ. Քոչարյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցը (մարզիչ՝ Սիմոն Սիմոնյան): Օլիմպիադայի մարզային փուլի մրցումներին մասնակից բոլոր թիմերի շախմատիստներին եւ մարզիչներին Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության կողմից հանձնվել են հուշանվերներ:

Վարդենիկի կրթահամալիրի հավաքական թիմը մարզը կներկայացնի ՀՀ դպրոցականների շախմատի 20-րդ օլիմպիադայի եզրափակիչ փուլում:

Գեղամ Չարվադարյան

ՇՈՂԱԿԱԹՈՒՄ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎԵԼ Է ԳԵՐԵԶՄԱՆՈՅ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Շողակաթ գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ավարտական փուլում են գտնվում գերեզմանոց տանող ճանապարհի հիմնանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Ճամբարակի համայնքապետարանի աշխատակազմից, Շողակաթի գերեզմանոց տանող ճանապարհի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 46 միլիոն 76 հազար դրամ, որի 40 տոկոսը հատկացրել է ՀՀ կառավարությունը, 60 տոկոսը՝ Ճամբարակի համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Շողակաթի գերեզմանոց տանող ճանապարհի հիմնանորոգում՝ բետոնային սալարկմամբ, 320 մետր երկարությամբ եւ 2610 քառակուսի մետր մակերեսով:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի աշնանից եւ 2026 թվականի մայիսի 14-ի դրությամբ արդեն ավարտված են:

Ծրագրի շահառու են հանդիսանում Շողակաթ գյուղի բոլոր բնակիչները:

«Գեղամա աշխարհ»

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԲԱՐՁՐԱՆԱՎ

2026 թվականի հունվարի սկզբից մինչեւ մայիսի 17-ն ընկած ժամանակահատվածում Սեւանա լճի մակարդակը բարձրացել է 27 սանտիմետրով, սակայն նախորդ տարվա մայիսի 17-ի դրությամբ գրանցված նիշից այն ցածր է մնում 17 սանտիմետրով: Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության վարչությունից, այս տարվա սկզբին Սեւանա լիճը ծովի մակերեւույթից գտնվել է 1900 մետր 22 սանտիմետր բարձրության վրա, իսկ մայիսի 17-ի տվյալներով այդ նիշն արդեն կազմում է 1900 մետր 49 սանտիմետր:

2025 թվականի մայիսի 17-ին Սեւանա լճի բարձրությունը ծովի մակերեւույթից կազմել է 1900 մետր 66 սանտիմետր:

2026 թվականի հունվարից մինչ մայիսի 7-ն ընկած ժամանակահատվածում Արփա-Սեւան թունելային ջրատարով Սեւանա լիճ է տեղափոխվել 62 միլիոն 446 հազար խորանարդ մետր ջուր:

Սեւանա լիճ թափվող գետերում դիտվում է ջրի ելքերի որոշակի ավելացում:

ԳԵՂԱՄԱ աշխարհ

Լրատվական գործունեություն իրականացնող «Գեղարքունիք» թերթի խմբագրություն» ՓԲԸ: Հասցեն՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
էլ.հասցե՝ khosrov1@yandex. ru
Գլխավոր խմբագիր՝ Խոսրով Խլղաթյան
հեռ. բջջ. 094022692

Վկայական՝ 02 Ա 050560: Գրանցման համարը՝ 25.120.00834:
Տրված 07.05.2001թ.: Տպաքանակը՝ 1000: Ծավալը՝ 2 մամուլ:
Թողարկման օրը՝ 21. 05. 2026 թ.:
Տպագրվում է «Սամարկ» ՍՊԸ տպարանում:
«Գեղամա աշխարհ» թերթի բոլոր համարներին կարող եք ծանոթանալ https://tert.nla.am կայքում: